

Упр. закупы

491.99-8

5-60

1005-10
411.1061

Ներած է Հայոց գրերի գիւտի 1500-ամեակի եւ տպագրութեան 400-ամեակի
ստեղծարարին



Բ. ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

ՊԱՂԱՅԻՐԵԿԱՆ ՉԵՌԵՅԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ ԵՒ ԻՐԱԶՆՆԵԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Apr.
4-838a
491.99-8
5-66

4-838a Am-1061


hals

Ե Ր Դ Պ Ր Ո Ց Ը

Բ. ՏԱՐԻ


ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ ԵՒ ԻՐԱՋՆՆԵԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ



Կազմեցին

ՄԻ ԽՈՒՄԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ




ԽԽՅ. № 20818



Տպարան «ՀԵՐԱՆԻՍ» Գրաֆսկայա փող. № 6. Հեռախոս № 566.

1914

Դրքի նիւթերի արտատպութեան եւ պատկերների ընդօրինակութեան իրաւունքը
ՎԵՐԱՊԱՀԻԱԾ Է:




29641-63

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇՐՋԱՊԱՏ

1. Մեր դպրոցը



Եկաւ նախշուն, անուշ աշուն,
Մեր դպրոցը
խփեց ուժգին զանգը կրկին.
— Եկէք, ասաւ, ժամը հասաւ,
Մեր դպրոցը
բաց է նորից սեպտեմբերից:
Եթէ հիմի դաք ուսումի՝
Մեր դպրոցը
ձեզ կընդունի, տեղ շատ ունի:
Ծօրք է վերջանում դպրոցների ուսումը:



2. Դեպի դպրոց



Աշուն է...
Հանգն է դատարկ, ծառը մերկ,
Զը կայ թռչուն, չըկայ երգ...
Վերջացաւ դաշտային աշխատանքը: Արօրը,
գութանն ու տափանը տուն եկան:
— Է՛, Խաչիկ ջան, էլ հանդերում գործ չունենք
անելու՝— ասաւ հայրը իր որդուն,— արի՛ դպրոց
տանեմ քեզ:
Գնում է Խաչիկը իր հօր հետ ու ասում.
— Հայրիկ, բա՞ որ գիրք չունեմ, տետրակ չու-
նեմ, ինչպէս սովորեմ: Հայրը պատասխանում է.—
Գիրք ու տետրակ, Խաչիկ ջան,
Դպրոցումը քեզ կը տան:

Հանելուկ.— Էն ինչն է, ինքը գնում է, հետքը մնում է:

3. Խնձոր

Խնձոր, խնձոր,
Ի՛նչ խնձոր,
հոտոտ-մոտոտ,
մեղրածոր,



կարմրաթուշիկ,
ոսկեհատ,
կուտ ու կորիզ
նռան հատ:

Առած.—Ծառն իր պողից
կը ճանաչէի:

Ուրիշ ի՛նչ մրգեր գիտէք:

4. Հովանոցի տակ

Շողիկն ու Շաւարշը մի անձրև օր դպրոց էին գնում: Նրանք մի հովանոց ունէին:

—Էս մի հովանոցով ի՛նչ պէտք է անենք երկուսս,—ասաւ Շաւարշը:

—Արի էսպէս անենք,—ասաւ Շողիկը, մինչև կէս ճամփէն հովանոցը դու բռնի պիտի դ, յետոյ՝ ես:

—Էա գտար, Շողիկ, դէ ան: Ու ճամփա ընկան: Կէս ճամփին Շողիկն ասաւ.

—Շաւարշ, հիմա դու բռնիր:

Երբ մօտեցան դպրոցին, Շողիկը մտաւ հովանոցի տակ ու ասաւ.

—Շաւարշ, չէ՞ որ մենք հովանոցով եկանք, ինչո՞ւ ենք թրջւել:

Երկուսն էլ մնացել էին զարմացած:

Ի՞նչու թրջւեցին նրանք:

Հանելուկ.—Անիծել թռաւ, անտը մնաց:



5. Ոսկին ու քուրը

—Աշխարհն իմն է,—ասաւ ոսկին:

—Աշխարհն իմն է,—ասաւ թուրը:

—Աշխարհը կը գնեմ,—ասաւ ոսկին:

—Աշխարհը կը խլեմ,—ասաւ թուրը:

Ո՞վ է ուժեղ:

Առած.—Մի ասեղ պիտի առնի, երկաթի փութն է հարցնում:

6. Պատմեցէք այս պատկերի թովանդակութիւնը



1. Ո՞վքեր են սրանք եւ ո՞ւր են շտապում:
2. Ո՞վ է կանգնած դռանը եւ ի՞նչ է անում:
3. Ի՞նչ կը լինի որ ուշանան եւ կամ չը գնան:
4. Էլի ո՞վ կայ աշտեղ:

7. Սառայի խաղը

Առնում գնդակը,
զարկում է գետնին,
Թռչում գնդակը,
բռնում է կրկին.
Եւ ամեն անգամ
պտոյտ է գալիս՝



գնդակը կրկին
գետնին է տալիս:
Պտոյտ է գալիս
Թռչում, Թռչկոտում
ու բսան շրջան
խաղ է բոլորում:

Ուրիշ ի՞նչ գնդակախաղ գիտէք:

Հանելուկ.—Առակ, առակ, դաստառակ, կէսը գործած, կէսն անգործ:



8. Նունիկի համբոյրը

Հայրիկը բռնեց Նունիկի ձեռքը ու տարաւ դռններու:
—Վայ, հայրիկ ջան, մոռացայ,—ասաւ Նունիկը ու իսկոյն ետ
վազեց տուն:
Հայրը մնաց փողոցում կանգնած: Մի քիչ յետոյ Նունիկը վե-
րադարձաւ ու փաթաթեց հօրը:
—Ի՞նչ էիր մոռացել,—Նունիկ ջան,—հարցրեց հայրը:
—Թէ իմանամ, հայրիկ:
—Ինչպէ՞ս իմանամ, ձեռքիդ բան չունես, գրպանդ ես դրել հա՞:
—Գրպանս... այ տես, ոչինչ չը կայ,—ծիծաղեց Նունիկը:
—Բա ինչպէ՞ս իմանամ, ի՞նչ ես ծիծաղում:
—Ուզո՞ւմ ես ասեմ:
—Մոռացայ համբուրեմ մայրիկին, գնացի համբուրեցի:

Ինչո՞ւ համբուրեց Նունիկը մայրիկին:

Շուտասելուկ.—Մեր դռանը եօթը պարկ, եօթը պարկին՝ եօթը պարկակապ:




9. Ախպօրս

Ախպէր, ախպէր, ջան ախպէր, շաքարը մաղած պիտի,
արեգակի թև ախպէր, մեղրով շաղաղած պիտի,
շաքար մաղեմ՝ կեր ախպէր: իմ ախպօր համար պիտի:

Ա. ա. ծ.—Քոյրն ասաւ՝ ախպէր ունեմ, ախպէրն ասաւ՝ քոյր չունեմ:

10. Կատու



Կատուն ձագերը թողեց
տանը, դուրս եկաւ բակը, որ
մի բան թոցնի: Աչքովն ընկան
սագի ձագերը, բայց սագը
ֆստալով վրա վազեց ու ասաւ
կատուին.—

—Ի՞նչ ես նայում ձագե-
րիս, գող, ֆը՛ստ-ֆը՛ստ, կորի՛
այստեղից, կորի՛:

—Փֆա՛, փֆա՛, արաւ կատուն ու թաթերը դէմ արաւ սագին:

Վրա հասաւ աքաղաղը.

—Կը՛-կը՛-կը՛-կը՛-կը՛.— ո՞վ է, ո՞վ:

Նրա ձայնին վազեցին եկան պրտալըտուրիկ, չալպտուրիկ հա-
ւերն ու աղաղակեցին.—

—Կա՛, չկա՛, չկա՛-չկա՛-ի՞նչ կայ, ի՞նչ կայ:

—Կատուն է, եկել է ձագ գողանալու,—ասաւ սագը:

—Կը՛-կը՛-կը՛-կը՛—գողանալով,—բարկացան հաւերը և ուզեցին
վրա տալ, բայց կատուն արդէն կտուրն էր հասել:

Կատուն ի՞նչու փախաւ:

Ա. ա. ծ.—Կատուն իր մէջքը գետին չի խփում:



11. Արի՛, սեւ էծիկ

Ճակատդ պէծիկ,
այ իմ սև էծիկ,
աչքերդ կրակ,
մի մի վառ ճրագ:
—Արի՛, ցիկ, ցիկ, ցիկ,
այ իմ սև էծիկ:



Պոգերդ բիզ-բիզ,
միրուքդ մի թիզ,
ոտներդ բարակ,
վազում ես արագ:
—Արի՛, ցիկ, ցիկ, ցիկ,
այ իմ սև էծիկ:

Այծն ի՞նչ օգուտ է տալիս:

Բառախաղ.—Չինդ էծ ունեմ եօթ-ութ ուլով,

կաթն եմ կթում կժով-կուլով:

Ա. ա. ծ.—էծն էծի համար լաւ է՝ բան մի սուրու ոչխարը:

12. Էն ո՞վ էր



Աբլորն ելաւ կտրան ծէրը՝
— ծնւղ-ընւ-ղնւ...

Ձէնը հասաւ էն բերծերը
— զնւ-զնւ-զնւ...

Աբլորն իսկոյն ծկրակեց վեր
բարկացած,
որ իմանար՝ թէ էն ո՞վ էր
իր դիմաց.

բայց երբ մէկ էլ պինդ ծղղրրտաց՝
— ծնւղ-ընւ-ղնւ...

Քար ու քարափ նորից թնդաց
— զնւ-զնւ-զնւ...

Եւ մ' ծայնն էր լսում աքաղաղը:

Շուտասելուկ. — Համ գամ, համ լամ, համ լամ, համ գամ:

Ա. ա. ծ. — Աբլորն ասաւ. «Ես կը կանչեմ, կուգէ լուսանայ, կուգէ՝ ոչ:



13. Հպարտ աքլորը

Աքլորը թռաւ ընկաւ հարեանի բակը: Ճղղաց, ճղճղաց, բակի
աքլորին կտցեց-կտցահարեց, բաղերին դուրս արեց, հաւերին մի
տեղ հաւաքեց ու յետոյ յարձակեց փոքրիկ շան վրա:

Բակն իրար անցաւ: Աքլորը կանգնեց ու հպարտ-հպարտ կանչեց. —

— Ծուղըրուղնւ, դուք ո՞վ էք,

չասէք թէ դուք խմբով էք,

ես մէն-մենակ բոլորիդ. —

հաւիդ, բաղիդ, աքլորիդ

ինչ ուզենամ, էն կանեմ,

չանն էլ բակից կը հանեմ:

Հարսը լսեց բակի աղմուկը,



վազեց բռնեց աքլորին, դուրս շարտեց բակից ու ասաւ.

— Կորի, գնա, անպիտան.

բեղ պէսին էլ երես տա՛ն,

բաւական չէ բակումն է,

ուրիշին էլ թակում է:


Նա ինչպիսի աքլոր էր:

Ա. ա. ծ. — Հպարտին դուրսը ծեծեցին՝ տանը ոչինչ չասաւ:



Սիրաւոյ.

Արշալոյսը բացեց: Ինչեց գիւղի եկեղեցու
լանգը: Մեր կայան քանկեցի: Նանք կովերը
կրեց: Աղգիկները քունն ու դուռ արբեցին:




Ապրիկ հարսը ջուրը գնաց: Մեծ հարսը
թոնիրը վառեց: Ծուինն ու մուխը գիւղը բռնեց:
Կովերը բառաւեցին: Նախիրը հանդը գնաց:
Աղխապաւոր գիւղացին դիմեց իր գործին:

Ո՞վ է տեսել զիւղի առաւօտ:

15. Տիկնի պսակը

ա.



Պսակ-պսակ, տիկնի պսակ,
փեսան եկաւ լիքը քսակ.—
տիրնա-նինէ,
տիրնա-նինէ,
զուռնի ձէնը գեղով մին է:

Բօյը չինար, մէջքին քամար,
աչքերը ծով, ունքը քամար,—
տիրնա-նինէ,
տիրնա-նինէ,
էս մեր փեսան շատ անգին է:

բ.



Բարով եկաք,
բարով գնաք,
ձեր ճամփէքը
փուռնջ-մանուշակ:

Բարով եկաք,
բարով գնաք,
օրհնւի մեր
տիկնի պսակ:

Տիրնա-նինէ,
տիրնա-նինէ,
նորահարսը
ձեզ բաժին է:

գ.



Կլոր պար, մէջը ծառ, փեսայ, արի հարսին տար:

Տիրնա-նինէ, տիրնա-նինէ,
տիրնա-նինէ, տիրնա-նինէ,
պար եկողը նոր փեսան է. պար եկողը նորահարսն է:

Ո՞վ է իսկական հարսանիք տեսել:

Ա. ա. ծ.— Էշին հարսանիք կանչեցին՝ առաւ.

— Կամ ջուրն է պակաս, կամ փայտը:



16. Բրուտը

Մեր տան մօտ բրուտանոց կար. տեսնում էի ինչպէս բրուտները կաւից ցեխ էին պատրաստում և ցեխից շինում կուժ, կուլայ, կարաս, կճուճ, բրեղան, փարչ, կովկիթ և ուրիշ ամաններ: Շինած ամանները չորացնում էին, հնոցում թրծում, հանում, ճաքճաքները շոկում, իսկ լաւերը մի կողմ դարսում ծախելու համար:

Ժամերով նստում ու նայում էի բրուտներին. ինձ շատ էր դուր գալիս նրանց աշխատանքը:

— Ա՛խ, թէ կը մեծանամ, ես էլ սրանց նման գեղեցիկ ամաններ կը շինեմ,— մտածում էի ես:

Մի օր էլ կաւից ցեխ պատրաստեցի, ամաններ շինեցի, կրակ արի, թրծեցի, ուզում էի կրակից հանել, տեսնեմ բոլորը փշրած: Դու մի ասի, թաց-թաց էի դարսել հնոցում:

Կաւից ուրիշ ի՞նչ են շինում:


Ի՞նչ ամաններ են շինում՝ աղնճից, մրկաթից, փայտից, ապակուց:

Ա. ա. ծ.— Բրուտը կժի ունկը որ կողմը ուզենայ՝ էն կողմը կը դնի:

17. Ժամացոյցի սլաքները

Դահլիճի պատից կախած էր մի շքեղ ժամացոյց: Առաւօտեան ժամը հնգից քսանեօթ ըսպէս անց՝ նրա երկու սլաքները հանդիպեցին միմեանց:

— Ես չէի կարծում, — ասաւ երկար սլաքը, — թէ դու այդչափ դանդաղ կը լինես: Իրիկեանից ես տասներկու շրջան եմ արել, դու միայն մէկ շրջան:



— Այո, ես շատ ծանր եմ ման գալիս, — պատասխանեց կարճ սլաքը:

Ինձ զարմացնում է քո ծուլութիւնը, թէ դու... երկար սլաքը դեռ խօսքը չէր վերջացրել, որ յանկարծ դահլիճ մտաւ աղախինը:

Սլաքները լռեցին և դարձեալ լսեց ժամացոյցի չըխըխկոցը:

Աղախինը յատակն աւելեց, կահկարասիները մաքրեց ու հէնց ուզեց ժամացոյցի փոշին էլ սրբել, մէկ էլ... չըլիկ, երկար սլաքը վայր ընկաւ: Աղախինը վազեց յայտնեց տանտիկնոջը:

— Ոչինչ, — պատասխանեց տանտիկինը, — մինչև նորոգելը մենք առանց երկար սլաքի էլ կարող ենք իմանալ թէ ժամը քանիսն է. լաւ է, որ կարճ սլաքը չէ ընկել: Գործդ վերջացրու, գնա ժամագործին կանչի:

Օրը քանի ժամ ունի:



18. Աշուղ ծիտը

— Ծի-տան, ճի-տան, սագ եմ ածում, Ծի-տան, ճի-տան, մի երգ գիտես. սիրուն սագս մի տես, մի տես, այն էլ կերգես կակազ-կակազ. ճի-տան, ճի-տան, երգ եմ ասում, դէհ իմ երգը լսիր ու տես, Աշուղ ծիտն եմ, դու ինձ գիտես: Սոխակի երգ դու լսած կամ...

Ի՞նչ երգիչ թռչուններ գիտէք:

19. Առաջին աշուն

Անցաւ ամառը, եկաւ լի ու շէն առաջին աշուն: Եկաւ ու տեսաւ ամառայ տւած բալիքը պէս-պէս. — արտերը հնձած, կալերում դիզած, մի առատ սեղան իր առաջ փռած: Տեսաւ ու ասաւ.

— Ապրես, այ ամառ, աշխարհի համար, որ դու տւել ես ամենին պաշար: Ես էլ տալիս եմ այգին պողաւետ, բաղեցէք տարէք այս սեղանի հետ:

Որ այսպէս ասաւ՝ թռչուններն ելան, երամ կազմեցին, թռան տաք աշխարհ: Մոտեց ու մըջիւն, գազան, անասուն, պաշարը առան, բները մտան:

Փչեց ցուրտ քամին. — ծառը մերկացաւ, տերևը թափեց. ամեն ինչ դեղնեց, դաշտը գունատեց, ամպերը եկան պատեցին երկինք, անձրևը մաղեց:


Ու այսպէս եկաւ առաջին աշուն:

Ի՞նչն է աշնան սեղանը:

Ո՞վքեր են ուտում այդ սեղանից:

Ա. ո. ա. ծ. — Գարնան գառն է գովելի, աշնան հաւը:

Զր գրան




— Զախար, մակար, Գիսակ, միսակ, մեր հաւերին դուք չը տեսնա՞ք, — Շուշիկ, Աուշիկ, խորէն, Աուրէն. ելէ՛ք տեսէ՛ հաւերն ո՞ւր են

Ու Զախարը թուա դուռը, խաչապուրը քան կրուրը, Խաչկը արագ վազեց մարագ... Օնիկ, Աօնիկ, Զախար, մակար, Խաչկը Եօրը ով կար, չը կար՝ դէս-դէն ընկան. հաւ չը գրան:

21. Տերևաթափ

Անցնում էի անտառով: Տերևները պոկւում էին ծառից, պտույտներ անում ու մէկիկ-մէկիկ ցած թափւում:



Տերևաթափ էր: Միպտակ, դեղին, կարմրաւուն, մոխրագոյն տերևները խշխշում էին ոտքի տակ:

— Խեղճ տերևներ, ասում էի ես, բամին է պոկել, ոտքի տակ ձգել, ափսոս ձեզ, ափսոս:

— Ի՞նչ էք ափսոսում...

— Մենք գարուն-ամառ զարդարանք էինք ծառերի համար:

Աշուն է հիմի, անձրև ու քամի, էլ տերևները անտառն ի՞նչ կանի: Կանցնի ձմեռը, կը գայ նոր գարուն, էլի կը բազմենք մենք մեր ճիւղերին:

Տերևները ինչու են թափւում:

Ա. ռ. ծ. — Ծառ լինի, որ քամի չը գիպչի:



22. Անտերեւ ծառը

Փչեց ցուրտ քամին...
եկաւ մէզ, մշուշ...
թերթերը թափեց
ծաղիկը քնքուշ:
Անտերեւ ծառը
ճիւղերը ճօճեց,

աշնան քամու հետ
կագնեց ու վիճեց.—
— Ի՞նչու տերևս
մէկ-մէկ պոկեցիր,
ու աչքիս առաջ
գետին ածեցիր:

23. Աշուն

Գունատ աշուն է, էլ չըկայ թռչուն...
քամու թևերին տերևն է թռչում:
Միայն եղևնին այնտեղ, խոր հովտում,
կարմիր է հագել, աշնան դէմ ժպտում:

Ա. ռ. ծ. — Ծառը կացնին ասաւ.— Ի՞նչ կարում ես նրա համար,
որ կոթդ ես եմ տալիս:

24. Պատմեցեք այս պատկերի բովանդակութիւնը



1. Տարւայ ո՞ր եղանակն է պատկերացնում այս նկարը:
2. Ի՞նչ է գալիս վերեւից, ի՞նչ են եղել պարտէզի բոյսերն ու ծառերը:
3. Ի՞նչ է թափւում խողովակից եւ ո՞ւր է գնում:
4. Ո՞վքեր են նստած պատուհանում և ի՞նչ են անում:

25. Հաց ու պանիր



Աշնան քամին սրւարւալով ներս էր մտնում Շուշանի տունը։
 Լուսամուտին կայքած թղթերը դողդողում էին։ Շուշանը հիւանդ էր. քամին ոռնում էր դուրսը, նա տնքում էր ներսը։

Երկու երեխայ լաց էին լինում քաղցից։
 Դուռը բացւեց, ներս մտաւ ոտաբորիկ-զըլ-խաբաց Սօնան։ Սառը քամին խանձել էր նրա դէմքը, մերկ ոտները ցրտից կապտել էին։ Սօնան շալակին մի տոպրակ ունէր։

— Ջան, ջան, Սօնան է, հաց է բերել, ուրախացաւ երեխաներից մեծը։

— Ջան, ձան, Սօնան է, հաց է բերել, կրկնեց փոքրը։

Սօնան մօտեցաւ մօրը։


— Այ, հաց էլ տւին, պանիր էլ, մայրիկ ջան, — ուրախ-ուրախ ասաւ նա և ցած դրեց տոպրակը։

— Ապրես, Սօնա ջան, երեխաներին տուր ուտեն, ասաւ մայրը և նորից կուշ եկաւ։

Ա. Լ. Ժ. — Նեղ օրին՝ լէն օր էլ կայ։

26. Էն ժամանակն էր

ա.



Ժամանակն էն ժամանակն էր. —

լուռ մոծակին ձի արեց,
 վահան, նիզակ, սուր ճարեց,
 ոսպէ զնդակ շաղ տալով,
 չոփէ նիզակ թափ տալով,
 կռիւ ելաւ փղի դէմ։ —

Գոչեց. — Այ փիղ, կը յաղթեմ,
 այ, սև բողոճ, ո՞վ ես, ո՞վ,

որ ձուկ բռնես կնճիթով.
 Փիղը սաստիկ վախեցաւ,

բռնեց ուղտին խորտեց,
 փախաւ, իրեն ազատեց։



Բ.

Ժամանակն էն ժամանակն էր. նանը մի չար հաւ ունէր.
 ով անց կենար մօտովը՝ քացի կտար ոտովը։

Աչք էր հանում նա կտցով,
 գեղն էր արել արեան ծով։
 Գեղ-գեղովի կանգնեցին,
 հաւը մարագն արեցին,

դուռը վրան փակեցին։ Տէրը գնաց, որ կուտ տայ,
 ճիշտ եմ ասում, հաւատա՛, լիքն էր մարագը ձուով,

ո՞վ կարող էր հաշւել, ո՞վ...

Գեղ-գեղովի թոփ եղան,
 բերին կողով, բերին խան,
 էն ձւերը կրեցին,

տարան կալը ածեցին,

քարոտ կամեր լծեցին ու ձւերը մանրեցին։


Գեղը լցւեց ձուտերով, աշխարհք լցւեց ստերով։

Հ ա ն ե լ ու կ. — Էն ի՞նչն է. — կապում եմ՝ զնում է,
 բաց եմ անում՝ կանգնում է։


Ի՞նչ րեւայ

Արեւանք մրգով առաւ րեւայ, էզմիածինք պայ-
 ծառ րեւայ, Ասախը անկոյր րեւայ, Արախը
 վարար րեւայ, Արագածը գրոյր րեւայ։

Ուշի, Ուշական, փարպի, բիրական, Թալին,
 Թալիլ, Ասաբարա, գրալի պոլը դէնն արա։



28. Ծիծեռնակների ժողովը



Աշուն էր. արևը ծածկել էր ամպերի ետև, ամեն տեղ լուռ էր, ամեն տեղ դատարկ:

Ծիծեռնակները շարել էին թռի վրա ու զրոյց էին անում:

— Էդ ի՞նչ էք խօսում, հարցրեց կաշաղակը:

— Վաղը չեկու ես,

հարևան, խորհուրդ ենք անում թե ի՞նչպէս գնանք:

— Ո՛ւր էք գնում:

— Տաք երկիր. այնտեղ մեզ համար լի սեղան կայ:

— Աշխարհը կերաք ու նոր էք գնում. վայ էն երկրին, ուր ոտք կը դնէք, — ասաւ կաշաղակն ու թռաւ:

Առաւօտը վաղ ծիծեռնակները միասին մի քանի պտոյտ գործեցին իրենց բների շուրջը, ծըլւելալով բարձրացան կապոյտ երկինք ու ճամփա ընկան:

Ի՞նչու են խմբով գնում:

Ա. ա. ծ. — Ուղտին փուշ է պէտք, թող վիզը երկարացնի:

29. Թռչուններ

Աստուած թռչուններին ստեղծեց աշնանը:

Գիժ քամին պոկում էր ծառերի տերևները, պտտում ու դէս ու դէն ցրում: Աստուած խղճաց տերևներին, կռացաւ, վերցրեց ու փչեց նրանց վրա:

Եւ ի՞նչ հրաշք... Տերևները շունչ առան, թռչուններ դառան: Թռչուններ դառան ու թռուռացին օդում:

Կաս-կարմիր տերևներից եղան փասեաններ, կարմրակատարներ, կարմրալանջիկներ:

Դեղ-դեղին տերևները դարձան դեղձանիկներ, փայտփորիկներ, թուխակներ:

Մոխրագոյն տերևները՝ արտուտներ, կաքաւներ:

Մի քանի թռչուններ էնպէս պայծառիկ, էնպէս խատուտիկ ու գեղեցիկ էին, ինչպէս աշնան գոյն-գոյն տերևները: Մի քանիսն էլ գորշագոյն էին ու անտեսք:

Աստուած կանչեց սրանց իր մօտ, նորից փչեց ու ասաւ. —

— Դուք, իմ թռչնակներ, անգարդ էք ծնւել. նախշուն փետուրների փոխարէն ձեզ տալիս եմ անուշիկ ձայն:

Հէնց ասաւ չասաւ՝ անտառը լցւեց թռչունների դայլայլիկով:

Ու էսպէս, ահա ծնւեցին աշխարհի բոլոր թռչունները: Եւ քանի որ նրանք տերևներից եղան՝ սիրում են թաւուտ անտառը և իրենց բունը հիւսում ծառերի ճիւղերին:

Ի՞նչ գոյնի թռչուններ էք տեսել եւ ո՞րտեղ:

Ա. ա. ծ. — Մի ծառից համ թի կը լինի, համ հորսելի:

30. Չին ու եզր

Թամքած ձին ասաւ.



— Թամքած ձի եմ ձիաւորի, ոսկի թախտ եմ թագաւորի, ինձ զուգում են սարք ու կարգով, բազմում վրաս առք ու փառքով, բա դու ո՞վ ես, այ լծած եզ, ասա տեսնեմ, ինչի՞ պէտք ես:

Լծած եզն ասաւ.




— Ես էլ եզն եմ եզնաւորի, թե ու թիկունք գուլթնաւորի, աշխատում եմ ամբողջ տարին, հաց եմ տալիս ողջ աշխարհին: Ես որ չըլնեմ, վայ քու օրին, ո՞վ կաշխատի ձիու զարին:

Ա. ա. ծ. — Էշը դատի, ձին ուտի:

Հանելուկ. — Էն ո՞վ է. — երբ կենդանի է՝ խոտ ու դարման է ուտում ու ջուր խմում, իսկ երբ մեռնում է, եղ ու պանիր է ուտում ու գինի խմում:

31. Աղւեսը



Գող աղւեսը մի իրիկուն
հաւանոցն էր մտել թաքուն.
աղւէս ու հաւ.. փուշ կենդանին
մի հատ ճուտ չէր թողել նանին:



Պառաւ նանը ճրչապատառ,
առաւօտուայ բարի լուսին
վայ էր տալիս ու անդադար
անիծում էր գող աղւեսին:


— Աղւէս, մաղւես,
ցըցից կախես,
այ գող աղւէս...
էս ի՞նչ փորձանք
բերիր դու ինձ.
վայ-վայ, վայ-վայ,
այ գրողի փայ:

Շուտասելուկ.—

Թմբուլ, սմբուլ, խմբուլ, թմբուլիկ,
թմբաթուլթուլ, թուլ, կմբուլիկ...

Աղւէսն ի՞նչալիսի կենդանի է:
ինչո՞ւ են որսում աղւէսին:

32. Նամակ ծտերից



Մի սիրուն ծիտիկ, կտցին մի նա-
մակ, իջաւ մեր դպրոցի պատուհանին ու
ծըլւըլաց ծտերէն.—

«Նըզա-մըզակ Մըզեր դըզպ-ըըզո-ցըզին»:
Նամակը թողեց ու թռաւ: Կարդացի
գրած էր.— Սիրելի երեխէք:

Գրքերում գրել են, իբր թէ մենք գող ենք, որ մեզանից մէկը
մտել է ծիծեռնակի բունը ու տէր դառել. թէ ծիծեռնակները մեր
ընկեր ծտին թողել են բնում ու դուռը ցեխով ծածկել:

Այդ բանը հնարել են չար մարդիկ. սուտ է. մենք երգւում ենք
կանաչ տերևով, կարմիր արևով, կալ ու կուտով, որ պատւով
ծտեր ենք. մենք մեր բունն ունենք, մենք մեր տունն ունենք. մեզ
էլ են բամբասել, ծիծեռնակներին էլ, թէ չէք հաւատում մեր ա-
սածներին, կուզէք հարցրէք ծիծեռնակներին:

Բարևներս «Մեր դպրոց»-ին: Ծիտիկներ:

Ղէյրանի շագը

Մի ան-գամ հայ-րջս Գուն բե-րեց մի նո-
րա-մին կեն-դա-նի: Նա կար-մրա-ւուն, կարճ
մա-կե-րով, կրճ-դա-կա-ւոր, եր-կար ու բա-բակ
ոյր-վե-րով, կարճ պո-կե-րով, խը-լըլ-գիկ ա-
կանգ-նե-րով, ան-հան-գիստ մի կեն-դա-նի էր:

Նա զէյ-րա-նի շագ էր: Արբ բն-յե-լա-յաւ
վա-յում էր մեր ե-րե-ւից ու մենք խա-ղում
է-ինք մի-ա-սին:



34. Թոփլանը

Մի գիշեր մեր Նարգիզ երինջը կորել էր: Առաւօտը մառախուղ էր, հայրս ման եկաւ ման ու դատարկ տուն եկաւ:

—Ա՛յ մարդ, Թոփլանն էլ չը կայ,—ասաւ մայրս:

Երկրորդ օրը կրկին որոնեցինք, բայց իզուր, ոչ երինջը կար, ոչ շունը: Միւս օրը պարզ էր. երկար փնտռեցինք, վերջը երկուսին էլ գտանք.—Նարգիզն արածում էր, Թոփլանը հսկում էր նրան:

Թոփլանը ուրախ-ուրախ եկաւ ընկաւ հօրս ոտներն ու մէկ մեզ էր նայում, մէկ երինջին:

Երինջն էլ որ մեզ տեսաւ, բառաչեց: Նրա ոտքը արիւնոտ էր:

—Ապրես, Թոփլան,—շոյեց շան գլուխը հայրս,—Նարգիզին գայլից ազատել ես:

Եկանք տուն:

—Ա՛յ կնիկ, Թոփլանին մի տաշտակ լակ տուր, գայլի բերանից Նարգիզին խլել է,—հայրս ասաւ մօրս:

Ա. ո. ա. ծ.—Ոչ էժ ունենք, ոչ ուլ, սատանի ականջը խուլ:



35. Գայլը

Գող աւագակ գայլի մէկին չոքած գտան գառան բկին. նրան բռնած գիւղը տարան, գլխին արին ժամ-պատարագ ու կարգացին աւետարան, որ նա դառնայ խոտաճարակ,

իրեն փոխէ,

ճանճ չը կոխէ:

Ամբողջ գիւղը ժամ, աղօթքի,

մէկ էլ գայլը ելաւ ոտքի.

—Է՛, շուտ արեք, ժամանր, ասաւ,

ոչխարն արգէն սարը հասաւ:

36. Խորանակ աղւեսը

Գայլը հարցրեց աղւեսին.

—Աղւես ախպէր, ի՞նչպէս ազատեցիր փորձանքից:

—Լոյսը որ բացեց,—ասաւ աղւեսը,—տեսնեմ անտառը բթիս տակն է. սկսեցի վազել, մէկ էլ առաջս մի մարդ դուրս եկաւ. վախից սրտաճաք եղայ:

Մտածեցի՝ ի՞նչ անեմ. թէ կը փախչեմ՝ կը նկատի. ձգեցի խոտերի մէջ ու մեռածի պէս ոտքերս մեկնեցի:

Մտիկ տամ տեսնեմ՝ իր համար երգելով գալիս է:

Եկաւ մարդը, ոտքով մէկ խփեց ինձ, երկու խփեց, ամենեին մի մազս չը շարժեցի. յանկարծ բռնեց պոչիցս, զցեց շալակն ու գնաց: Էս չեղաւ, մտածեցի ես, վերջին օրս է, սա ինձ կը տանի ու կաշիս կը բերթի. մտածեցի, մտածեցի ու մի պինդ կծեցի նրա մէջքը: Խեղճ մարդ, ի՞նչպէս ճշաց ու գոռաց... գետնովը խփեց ինձ, ես էլ վեր կացայ ու փախի, որ կը փախչես:

Աղւեսը լսւաւ արաւ, որ մեռած ծեւացաւ:

Ա. ո. ա. ծ.—Մինչև խելօքը կը մտածի, գիժը գետը կտնցնի:

37. Գառը

Է՛, ի՞նչ ասեմ գառան մասին.

հաշանները «գայլ է» ասին:

Գրգռեցին, մրգրգեցին,

բուրդը-մուրդը խրգրգեցին

ու կախ արին ծիլածիլա:

Լաւ էր հլա,

հովիւը շուտ վրա հասաւ.

գրկեց,

փրկեց,

պաչեց, ասաւ.

—Ա՛յ իմ բժիկ,

այ իմ գժիկ,

գայլի մորթով ինչո՞ւ խայտաս,

որ քո մորթն էլ շանը փայ տաս:

Գառն ինչո՞ւ է սիրտլի:


Հանելուկ.—Էն ի՞նչ ծառ է, տասներկու ճիւղ ունի,

ամեն մի ճիւղին երեսուն տերև:



38. Սարդը

Խանութի մէջ,
իրեն տանը,
Սարդը հիմնեց
իր ոստայնը:
Հանեց իլիկ,
մանեց թելիկ,
բաշեց հէնքը,
շափեց լէնքը.
եղաւ, մտաւ,
գործեց կտաւ,—



է՛նպէս արագ,
է՛նպէս բարակ:
Լուսաբացին
դուռը բացին,
մտան խանութ
ու աւլեցին.
պատ, լուսամուտ
որ սրբեցին,
Սարդին բնով
դուռս գցեցին:

Սարդն ինչ է: Ուրիշ ինչ միջատներ գիտէք:

39. Ք ա մ ի

—Վը՛զզզ... փչեց քամին...

—Վը՛զզզ... փչեց ու թռաւ կտուրից-կտուր, բակից-բակ:
Կտուրների աղիւսները ցած թափեց, բակի դռները խփեց իրար,
սենեակների լուսամուտները բաց արաւ:

—Վը՛զզզ... բակից դուրս փախաւ փողոց:

Փողոցի փողին հաւաքեց՝ անցնողի երեսովը տւեց: Արամի գըլ-
խարկը թռցրեց, Լուսիկի հովանոցը
շուռ տւեց ու ճաղերը կոտրեց:



Փչեց, փչեց ու յետոյ, ասես
կրունկի վրա պտտելով, իրեն շուրջը
բոլորեւելով, բարձրացաւ երկինք ու...
վը՛զզզ... փախաւ:

Արամն ու Լուսիկը տուն եկան մի
կերպ:

—Մայրիկ, —ասաւ Արամը, —քամին իմ գլխարկը թռցրեց, Լուսիկի
էլ հովանոցը շրջեց. էդ հրտեղից է գալիս, ինչ բան է քամին:

—Ո՛րտեղից... ասեմ. կան տաք երկիրներ և կան ցուրտ երկիրներ:
Տաք երկրից օդը շարժոււմ, գալիս է դէպի ցուրտ երկիրները, իսկ
ցուրտ երկիրների օդը շարժոււմ է դէպի տաք երկիրները: Ահա, օդի
այդ շարժողութեանը ասում են քամի:

Ի՞նչ տեսակ քամիներ կան:

Հանելուկ—էն ինչն է՝ թևեր չունի թռչում է, ձեռներ չունի՝ բանդում է:

40. Առաջին ձմեռ

Մէգ—մառախուղը պատել էր երկիր, ցուրտ էր ամեն տեղ: Անդ
ու անդաստան դողում էր ցրտից:

Եկաւ ձմեռը, տեսաւ ամենքը մրսում են, դողում. խղճաց ու
ասաւ. «Ահա ձեզ վերմակ, փափուկ ու ճերմակ. առէք ծածկեցէք,
անուշ բուն եղէք»: Որ այսպէս ասաւ, ձիւնն եկաւ ծածկեց, սար,
ձոր ու անտառ ցրտից ազատեց: Վեր կացաւ քամին, բուր-բորան
արաւ, գետերի ջուրը լռեց ու սառաւ:

Ու այսպէս՝ եկաւ առաջին ձմեռ:

Ո՞րտեղ է շատ ծին գալիս:

Ա. ո. ա. ծ. — Գառը գարնանը, ձիւնը ձմռանը:



Կապաղակ

էդ ինչ աղմուկ, աղաղակ,
այ կապաղակ կապաղակ.
ինչ ես ընկել դռնէդուռ,
բակ ու պարտէյ ու կրուր,
խանի՞ փրչաւ, կրկրչաւ
—Զրկւմ-չրկւմ, չրկւմ-չրկւմ:
մէկ էլ յանկարծ կայրանում,
սուր կրուցդ բաց անում.
չէն ես քալի վրայի.
—Զրկւմ-չէ, չէ... չրկւմ-չէ. չէ:

42. Չմեն

Սարի կատարից
լուսինն է շողում,
կապտին է տալիս
ձիւնը պըսպըղուն:

Ռ՞վ է տեսել ձիւնի հատիկներ:

Հոսանի շողերը
ժամին են առել,
խաշը ամպի տակ
մոմի պէս վառել:


Ի՞նչ ձեւ ունեն այդ հատիկները:

Ձմռան գիշեր է,
քնած է գիւղը,
ձիւնը ծածկել է
գիւղացու խուղը:



43. Չմուսն ցրտին

ա.



Նապաստակը դաշտ ու անտառ է ընկ-
նում, ցատկում, ցատկոտում, ուտելիք
ձարում: Էնքան է վազում, վազվզում, որ
յոգնում է ու թմրում: Նա մտնում է ծառի
փշակը կամ խոր թաղում ձիւնի մէջ.
կծկում է, թաթիկները սեղմում փորին,
տաքանում է ու քնում:

բ.



Սկիւռը նապաստակից խորամանկ է. նա օր
առաջ գիտէ, որ ձմեռ է գալու. ընտրում է իր
համար մի ծառի փշակ, որ սառը քամուց ու
բուք-բորանից պաշտպանւի: Փշակում իր համար
չոր խոտից ու տերեւներից անկողին է պատրաս-
տում. մտնում է մէջը, թմրում ու քնում:

գ.



Ձմռան ցրտին ոչխարները խմբւում են գո-
մերում, կողքերը իրար կպցնում, շնչում են,
փնչում, տաքանում, քնում:

Հաւն էլ մէկ մի ոտը, մէկ միւս ոտը սեղմում
է փորին, կախում է թևերն ու ցրտից պաշտ-
պանւում: Այդպէս է պաշտպանւում և աքաղաղը:

դ.



Շունը շարժում է իր մը-
կանները և այնպէս տաքանում:
Իսկ կատուն կծկւում է մի
տեղ, ոտները ծալում իր տակն
է անում, պոչն էլ բերում է
փորովը պատ տալիս ու այնպէս
տաքանում:

Այսպէս ամեն մէկը մի
կերպ գարուն է հասնում:

Ուրիշ կենդանիներն ի՞նչպէս են պաշտպանւում ցրտից:

Ա. ու ա. ծ. — Ձմեռայ վարդը կրակն է:



44. Յուրտ է

Յուրտ է, ցուրտ է... բուք-բորան,
եկաւ ծածկեց պատուհան.
գրիչ ունի նա ձեռքին,
նրա թուղթն է ապակին.—
ծաղկէ-նկար է արել,
ու ապակին նկարել:

Նկարելում շատ վարժ է,
ինչքան գովես՝ նա արժէ:
էստեղ տաք է. դեռ ոչինչ,
բա դռանը՝ ինչ է, ինչ,
դէ մի փորձի դուրս գնա,
քիթդ էստեղ կը մնայ:

Ձմեռն ի՞նչն է նկարում՝ լուսամուտի ապակու վրա:

45. Սուրիկի մտածմունքը

Ձմեռն էր: Սուրիկը պառկել է անկողնում, բունը չի տանում:
Պատուհանից տեսնում է լուսինն ու ասում.

— Է, գունատ լուսին, դու էլ ես մրսում... բա արևը ինչո՞ւ է
էնպէս տաք... Ի՞նչ լաւ էր աղւեսի հէքիաթը... «Աղւէս, աղւէս, ցցից
կախւես»... Հիմա անտառում ի՞նչ ցուրտ կը լինի... Արջերը, գայլերը
ի՞նչպէս են ապրում... Ասում են էնպիսի տեղեր կան, որ ձմեռ
չը կայ...

Ի՞նչ լաւ է, որ տեղս տաք է... «Յուրտը փշեց ձմեռ սաստիկ»...
էլ չիմացանք, վերջացրեց թէ չէ. նա արդէն մուշ-մուշ քնել էր:

Ե՞րբ է մ'արդ հանգիստ քնում:

Ա. ու ա. ծ. — Քիչ մի քնի, որ մեծ երազ չը տեսնես:



46. Պատմեցէք այս պատկերի բովանդակութիւնը



1. Տարայ ո՞ր եղանակն է պատկերացնում այս նկարը եւ ո՞րտեղ է:
2. Ո՞վ է եկել եւ ի՞նչու համար է եկել այդտեղ:
3. Ո՞վ է պատահել նրան եւ ի՞նչու է այնպէս նայում:

Աղխար կին

Կուրպը փէպ շնոռ սասարիկ
 շիւնը ծածկեպ գեպիւնը,
 անէն մի ճարդ ճրաւ իւր քունն
 պարսպարեպ քրքիքը:




Ժամի դռան
 դողդողալով
 կանգնած է մի
 աղխար կին,
 անհամարչակ նա իւր շնո՛ր
 պարպում է անցկացողին.
 - Ողորմութիւն արէ՛ք, պարո՛ն,
 անքուն, անքէր աղխարին....

48. Իսկի...

- Տեղը կիսիդ քանի տղայ ունի, Շուշան:
- Մի՛ի՛ք...
- Դո՛ւ քանիսն ունես:
- Ե՛ս... Իսկի... Սլիկը, Բիկը, Ինիկը, Մինիկը, Օնիկը, Ճօնիկը,
 Յովիկը, Ծովիկը, մինն էլ էս զրկիս ծծկերիկը... Ինչ է ո՞ր...

49. Քոքոք շունը



I

—Նանի, նանի, շարմաղ նանի,
մահն էն տեսակ շանը տանի.
էն անպիտան քոթոթ շունը
ներս է մտել հաւաքունը,—
ներս է մտել, շարդել, թափել,
բնակալը կոտրել, լափել...

Հաւ ու աքլար
լեղապատառ
շաղ են անցել
հակալ-հակալ:

—Ո՞վ ասիր, ո՞վ, գող քոթոթը,
ա՛յ կոտորւի նրա ոտը,
փէտս տուր ինձ, հոնի փէտս,
դու էլ արի, արի հետս,
նրան էնպէս քոթոթ ցոյց տամ,
կերածն անեմ գլխին հարամ:

II

Նանը գնաց տընքտընքալով,
փէտը ձեռին տընկտընգալով,
տո՛ւր թէ կըտաս,
տո՛ւր թէ կըտաս...

էնքան տւեց գլխին, ոտին,
աղցան շինեց գող քոթոթին:
Շունը ծեծից
կլանչում էր.—


—Ո՞ւ... ւֆ, ո՞ւ... ւֆ...
Մէկ կաղկանձում,
մէկ հաչում էր.—
—Հւֆ-հւֆ, հւֆ-հւֆ...
Մէկ վընգընգում,

հարայ տալիս.—
—Ա՛ռու..., ա՛ռու...
Մէկ էլ ոռնում
ու վայ տալիս.—
—Ո՞ււում, ո՞ււում...

Ա. ո. ա. ծ.—Փայտը որ վերցնես, գող շունը կիմանայ:

50. Ինչո՞ւ են հալածում մեզ

Սով էր ընկել մկաստան: Խեղճ մկները յատակի տակից քթերը
չէին կարողանում դուրս հանել: Ամեն մի անկիւնում նստած էր
մի կատու:



—Ինչո՞ւ են հալածում մեզ,
ի՞նչ մեղքի տէր ենք,—ասաւ
Պանրագողը:

—Մի տեսէք, ոտքի վրա չո-
րացել, մնացել ենք, էս էլ
խի՞ղճ է,—ասաւ Նղասէրը:
—Ներեցէք, պարոն մկներ,—
ասաւ հին ցախաւէին անկիւ-
նից,—չէ՞ որ դուք մառանումն
էլ բան չէք թողել, բոլոր ուտե-
լեղէնը կրել էք:

—Այո, էդ մեր հին արհեստն է,—ասաւ Չաւարակերը:

—Հապա գրադարանի գրքերը, որ փչացրել էք:

—Էհ, մի երկու հարիւր գիրքն էլ մե՞ծ բան է,—ասաւ Կրծանը:

—Էդ էլ մի կողմը մնայ, բա որ յատակն էլ էք ծակել-ծակծկել:

—Շատ լաւ ենք արել, թող գնան ձաքեն,—ասաւ Բկլիկը:

—Բա էլ ինչո՞ւ էք ասում թէ մեղք չունենք, ինչ որ անեն ձեզ՝
տեղն է,—ասաւ ցախաւէրը:

—Ի՞նչ, ի՞նչ, էդ ինչ ասացի՞ր, ա՛յ դու թերմաշ ցախաւէլ,—ծըւ-
ծըւացին մկները,—դու էլ նրանցից ես հա՛, գէ, տղերք, վրա տւէք:
Եւ բոլորը միասին վրա թափւեցին ցախաւէլին:

Մկներն էլ ի՞նչ են ուտում:

Ո՞րտեղ են շատ մկներ լինում:

Ա. ո. ա. ծ.—Կաթի հետ մտածը՝ հոգու հետ դուրս կը գայ:



51. Չիւն

Երկինքն է ամպել,

Երկիրը կըլնի

կը գայ մարմառ ծիւն,

նրա տակը քուն:

52. Սերորը

—Սերորը,—ասում է հայրը,—գնա հարևանից արշինը բեր, կտաւը չափենք:

—Է՛, բան չունես, հայրիկ, ինչ նեղութիւն տանք հարևանին, ես գիտեմ, որ մեր կատուն պոչից մինչև ականջի ծայրը մի արշին է: Ել արշինն ի՞նչ կանենք:

—Սերոր, Սերոր,—ասում է հայրը,—ապրես, գնա հարևանից գրանքանոցը բեր, պանիրը կշռենք:

—Է՛, բան չունես, հայրիկ, այ մեր սատկած էշի սմբակը մի գրանքայ է:

—Սերոր, Սերոր, դու ինձանից թեթեւ ես, մի դուրս վազի, տես եղանակն ի՞նչպէս է:

—Է՛, հայրիկ, էլ ի՞նչ գնամ, կուգես մեր շանը կանչեմ, թէ մազերը չոր են, հօ եղանակը պարզ է:

—Սերոր, Սերոր,—չունչը կտրած ասում է հայրը,—հացը բկիս կանգնեց, ջուր, ջուր, ջուր...

—Է՛, հայրիկ,—ասում է Սերորը,—դու էլ ինչ դժար բան կայ, ինձ ես ասում...

Ի՞նչպիսի տղայ էր Սերորը:

Ա. ռ. ա. ծ.—Խելօքին մէկ ասան, խելառին՝ ինչքան կուգես:



53. Պուտուկը

—Տակս ոսկի է,—մի օր փքւած հպարտ-հպարտ պուտուկն ասաց:

Շերեփը թէ՛

Սոս, ամօթ է.

մի պարծենար գոնէ ինձ մօտ,

հաստափորիկ կաւէ անօթ.

նրտեղից եմ գալիս բա ես,—

տակդ կաւ է, թէկուզ ճաքես:

Հանելուկ.—Էն ի՞նչն է. երկար սիւնը փորեցին,
առիւծը մէջը հորեցին:

Արրէյի մանկակ



Չէ՞ որ մայիսի եօթին իմ րօնն էր, արդեօք ինչո՞ւ չեկար: Դամարեա բոլորը եկել էին: Լիդանեակը երգեց Լիդայեա, նի «Ժիժեռնակը բուն է շինոււմ». ինչ լաւ երգեց: Դմայեակն ու Լիրուսեակը կարգային թու մանկանի «Շունն ու կայուն», ժիժաղից թու լայանի. ին պարկերն էլ մեկ հեկո ժիժաղոււմ էր պարից:

Քո Լիդանեակ

ինչո՞ւ են առարկաները ստեր գցում:

55. Չախչախը

Երկու մեծ քար,

Չաղացաքար,

մէկը վերից,

մէկը վարից,

աղուն կաղան.—

Գան-գոն, բրոն-ոն,

գան-գոն, բրոն-ոն...

—Ինչ որ աղանք,

մերն է բոլոր:

Գան-գոն, բրոն-ոն,

գան-գոն, բրոն-ոն...

Չախչախն ընկած

վերի քարին,

չըխչըխկալի

ձէն է տալի:

Չէն է տալի

արագ-արագ.—

—Չէ, չէ,

ինչ որ աղաք,

երկու ձեզ, մին ինձ,

չէ, չէ,

ինչ որ աղաք,

երկու ձեզ, մին ինձ...

Ո՞վ է եղել Չաղացում: Ի՞նչ են աղում աշտեղ:

Ա. ռ. ա. ծ.—Չաղացը ջուրն է տարել, չախչախն է ման գալիս:

Թռչկոտում էր ձուրկը, թռչկոտում էր ծաղկից ծաղիկ, խոտից խոտ ու ճուրիկ, ճուրիկ, ճրոճրոտում:



Անմեղ աղջիկ էր,
ծաղկի փնջիկ էր,
սիրտն էր խօսում,
երգ էր ասում:

Մի օր ձուրկը մի արծաթ շահանոց գտավ ու ճուրիկ, ճուրիկ, ճրոճրոաց:

—Օյ, Օյ, Օյ, էս ի՞նչ բախտ, էս ի՞նչ գանձ է, էս փողով ես ի՞նչ գնեմ:

Կապուտակ ձի առնեմ, հեծնեմ-թռչեմ: Չէ, չէ, ի՞նչպէս ջրեմ, ի՞նչպէս կերակրեմ:

Գորգ առնեմ, տակս փռեմ: Չէ, չէ, ի՞նչպէս մաքրեմ, ի՞նչպէս թափ տամ: Չէ, լաւն էն է՝ կարմիր ժապաւէն առնեմ, —ասաւ ձուրկն ու առաւ:

Առաւ կապեց կարմիր ժապաւէնը, զուգւեց, զարդարեց, նստեց տան շէմքին, իրեն ցոյց տւեց:

Եկաւ Եղիկը, տեսաւ ձուրկին. —

—Բարե քեզ, ձուրիկ,
նազելի աղջիկ,
եկ ընկերանանք,
ընկերներ դառնանք:



Ես Եղիկն եմ, հեղիկն եմ, պէծիկ, մէծիկ
մազիկն եմ:

ձուրկն ասաւ.

—Ես էլ ձուրկն եմ...
սիրուն աղջիկ եմ,
վարդի փնջիկ եմ,
ոսկեգօծ մազիկ,

կարապի վզիկ.

մի բուռ կրակ եմ,
մուխ տան ճրագ եմ.
Իմ սիրտն է խօսում,
ես երգ եմ ասում:

Մի վրաս նայի, գտայ մի շահի, ժապաւէն առայ ու պէծիկ
դառայ. նա է ընկերս, ով երգել գիտէ:

Եղիկը երգեց բառանշելով.

—Մո՛ւ, մո՛ւ, մո՛ւ...

Ես Եղիկն եմ, հեղիկն եմ,
պէծիկ-մէծիկ մազիկն եմ:

—Է՛, լաւ, լաւ,

Եղիկ, հեղիկ,

պէծիկ մազիկ,

գնա՛, մի բան չես,

հերիք բառանշես:

Եղիկը գնաց, Իշուկը եկաւ: Եկաւ ու ասաւ. —

—Բարե քեզ, ձուրիկ,
նազելի աղջիկ,
եկ ընկերանանք,
ընկերներ դառնանք:
Ես Իշուկն եմ,
չոշ-չոշուկն եմ,
ձէնս ընթուշ, երգս, անուշ:



ձուրկն ասաւ. — Ես էլ ձուրկն եմ,
սիրուն աղջիկ եմ,
վարդի փնջիկ եմ,
ոսկեգօծ մազիկ,
կարապի վզիկ.
մի բուռ կրակ եմ,
մուխ տան ճրագ եմ:
Իմ սիրտն է խօսում,
ես երգ եմ ասում:

Մի վրաս նայի, գտայ մի շահի, ժապաւէն առայ ու պէծիկ
դառայ, նա է ընկերս, ով երգել գիտէ:

Իշուկը երգեց խռանչելով. —

— Ես իշուկն եմ,
չոշ-չոշուկն եմ,
ձէնս քնքուշ,
երգս անուշ...

— Է, լաւ, լաւ իշուկ,
ձէնդ պահի քեզ,
դու էլ մի բան չես,
հերիք խռանչես:

IV

Իշուկը գնաց, Փիսիկը եկաւ: Եկաւ ու ասաւ. —

— Բարե քեզ, Ճուրիկ,
նազելի աղջիկ,
եկ ընկերանանք,
ընկերներ դառնանք.



Ես մլաւան Փիսիկն եմ, խուճուճ-մուճուճ մազիկն եմ, աղա-
ների մուշտակն եմ, խանութների չուստակն եմ:

Ճուրիկն ասաւ. — Ես էլ Ճուրիկն եմ,
սիրուն աղջիկ եմ
վարդի փնջիկ եմ.
ոսկեգօծ մազիկ,
կարապի վզիկ,
մի բուռ կրակ եմ,
մուխ տան ճրագ եմ:
Իմ սիրտն է խօսում,
ես երգ եմ ասում:

Մի վրաս նայի, գտայ մի շահի, ժապաւէն առայ ու պէծիկ
դառայ. նա է ընկերս, ով երգել զիտէ:

Փիսիկը երգեց մլաւելով. — Ես մումուան փիսիկն եմ, խուճուճ-
մուճուճ մազիկն եմ...

— Է, լաւ, լաւ, Փիսիկ,
դու լաւը՝ լաւն ես,
բայց շատ լաւ կանես,
որ չը մլաւես:

V

Փիսիկը գնաց, Մկնիկը եկաւ:

Մկնիկը եկաւ, բեխերը սրած ու վերե ծռած. մուշտակը հագին,
ոլորած ազին, աչք է ման ածում, պռոշը կծում:

Եկաւ ու ասաւ. — Բարե պայծառիկ,
ճրճրռան Ճուրիկ,
աղու-աղունակ,
ծիտ ու ծիծեռնակ,
նազանի աղջիկ,
ալ վարդի փնջիկ,
եկ ընկերանանք,
ընկերներ դառնանք:



Ես Մկնիկն եմ, Մկնիկն եմ, դաշտի ոսկի ձկնիկն եմ:

Ճուրիկն ասաւ. — Ես էլ Ճուրիկն եմ,
սիրուն աղջիկ եմ,
վարդի փնջիկ եմ,
ոսկեգօծ մազիկ,
կարապի վզիկ,
մի բուռ կրակ եմ,
մուխ տան ճրագ եմ:
Իմ սիրտն է խօսում,
ես երգ եմ ասում:

Մի վրաս նայի, գտայ մի շահի, ժապաւէն առայ ու պէծիկ
դառայ. նա է ընկերս, ով երգել զիտէ:

Մկնիկը երգեց ծըւծըւալով. — Ես Մկնիկն եմ, Մկնիկն եմ,
դաշտի շէկիկ ձկնիկն եմ...

— Է, լաւ, լաւ, Մկնիկ,
դու լաւ ես երգում,
ձէնդ լսեցի,
քեզ շատ սիրեցի:
Եկ ընկերանանք,
ընկերներ դառնանք:

Ճոխկի բախտը չրբերեց. ճիշտ է, մկնիկը լաւ էր երգում, բայց տանը չէր մնում, որ երգէր, ճոխկը լսէր:

Շարունակ դուրսն էր. ինչ որ գտնում էր, մենակ էր ուտում:

Մի անգամ Մկնիկը տուն եկաւ, տեսաւ որ ճոխկի ընկերուհիները հիւր են եկել: Շատ քաղցած էր. դէս ու դէն ընկաւ, որ մի բան ճանկի: Բարձրացաւ կճուճի վրա ու ընկաւ տաք սպասի մէջ: Ընկաւ ու մեռաւ:

Ճոխկը քիչ մնաց խելագարւի. նստեց ու լաց եղաւ ընկերոջ համար.—

—Ինչ եմ անում ոսկի մագիկ,
ոսկի մագիկ, երկար վզիկ:
Թող ես շաղւեմ հում կաթի պէս,
սիրտս սննայ սև սաթի պէս,
դարդս ծորէ ճոխկ-ճոխկ:

Ախ, Մուկիկ ջան, վաղամեռիկ,
ձէնդ անուշ, մաղդ խուճուճ,
անտէր մնա էս խոր կճուճ,
որ բեզ չանէր ճստիկ-վստիկ,
այ իմ ընկեր, պստիկ-մստիկ:

Ու մինչև այսօր ճոխկը ճոճուալով լալիս է ընկեր Մուկիկի մահը:



57. Գիշեր

Իջնում է գիշեր	Լռիկ ու մռչիկ
սարերի ուսին,	կապոյտ երկնքով
փայլում է վերից	անցնում են ամպեր
կաթնագոյն լուսին:	անվերջ շղթայով:

Վերից նայում է
երկինքը ուրախ
քնած է գիւղը
անհոգ ու խաղաղ:

58. Առաջին գարուն

Դեռ հողը չէր տւել ծիւ ու ծաղիկ, դեռ կանաչ չըկար, երկիրը մերկ էր ու դժգոյն:

Եկաւ գարունը, անցաւ դաշտերով. որտեղ ոտք կոխեց, խոտը կանաչեց, տերեւ բացւեց, ծաղիկը ծաղկեց: Վարդ, մեխակ, շուշան, նարգիզ, նունուֆար և բիւր ծաղիկներ բուսան ամեն տեղ:

Եւ ուր որ նայեց, նրա նայւածքից անդ ու անդաստան իսկոյն կանաչեց թաւիշով ծածկւեց:

Լորին, չինարին, կեչին ու կաղնին և այլ շատ ծառեր անտառներ դարձան, սար-ձոր ծածկեցին:

Ժպտաց գարունը. ժպտաց ամեն ինչ՝ և՛ ծառ, և՛ ծաղիկ ժլպտացին, ասին.—

—Փառք քեզ, ստեղծող, առաջին գարուն:

Ա. ռ. ծ.—Մի ծաղկով գարուն չի գայ:



Իրիկուն

Իրիկուն էր. արևի փայլուն շողերը ընկել.



էին բարձր սարերին: Ամպերը ու-


կու գոյն էին առել: Արկինիք պայ-

ծառ էր ու կապոյտ: Իրիկուն մեղ-

միկ խամրն շրջւում էր ինիշ ծաղիկները:

Արևը մայր մըսաւ ու ցորայ փայլեց կար-

նագոյն լուսինը:



60. Մոկիկի մահը

—Հողն իմ գլխին, պառաւն ասաւ, —
Մոկիկի պէս մարդը մեռնի՞...

Ջարկեց իրեն ու ծլատեց,
մազաքծով գիւղը վազեց:

Գեղունն ասին. —

—Պառաւ տատիկ, ի՞նչ պատահեց:

—Քոռանամ ես, մի խօսեցնէք. —

Մոկիկի պէս մարդը մեռաւ,
աշխարհն էսպէս մնաց անտէր:

—Վայ, ո՞վ ասաւ, էդ ո՞վ ասաւ:

—Հողագործու ծիտիկն ասաւ,

թեր կոտրած Լորիկն ասաւ,

ճրղնակոտոր Ծառիկն ասաւ,

գըլտոր-մըլտոր Քարիկն ասաւ,

պրղտոր-մըղտոր Ջրիկն ասաւ.

մեր Մոկիկը մեռել է...

էլ ո՞վ մնաց էս աշխարհքում,

էլ ի՞նչ ապրենք էս աշխարհքում...»

—Ափսոս, ափսոս, հազար ափսոս,

որ էն տեսակ Մոկը մեռաւ...

էսպէս ասին

ու միասին

լացով, կոծով,

ճիչ-գոռոցով,

հաւաքեցին ու գնացին,

քարիցն ընկան, կոտորեցին:

Մոկն ի՞նչ տեսակ կենդանի է: Ի՞նչ տեսակ մ'կներ կան:

Շուտասելով. — Ձուկ զցեմ՝ ձուկ կուլ տամ,

մուկ զցեմ՝ ձուկ կուլ տամ:

Ա. ռ. ծ. — Մի մուկը հազար կարաս է հարամել:



61. Պատմեցէք այս պատկերի բովանդակութիւնը



1. Տարւայ ո՞ր ժամանակն են մարգերը մշակում եւ ի՞նչու:

2. Ո՞վքեր են սրանք եւ ի՞նչ են անում:

3. Հողի հետ աշխատելիս ի՞նչ գործիքներ են հարկաւոր:

62. Գարուն

Զուգլած, զարդարած
թաւիշ կանաչով,
ցոլում է դաշտը
ոսկի ճաճանչով:
Սիրուն մայիսը
գոհար է մաղել,

ծաղկանց թերթերը
շողել ու շաղել:
Հազար տեսակի
թռչուն է երգում
ու կանաչ դաշտը
զընգում-զընգում:

Գարունը քանի ամիս ունի: Ո՞րոնք են գարնան ամիսները:



63. Երեխաների վեճը

Ռուբիկն ասաւ.

— Գարնանը գիշերները կարճանում են:

Արսիկն ասաւ.

— Ո՛չ, ի՞նչ ես ասում, գարնանը օրերը երկարում են:

Ռուբիկն ասաւ.

— Սխալ ես, գարնան գիշերները կարճ են:

Արսիկն ասաւ.

— Դու ես սխալ, գարնան օրերը երկար են:

Ռուբիկն ասաւ.

— Ո՛չ, դու ես սխալ, գարնան գիշերները կարճ են:

Պապը լսեց նրանց վեճը, ծիծաղեց ու ասաւ.

— Բալիկներս, մի լաւ մտածեցէք թէ ինչ էք ասում:

Ռուբիկն ու Արսիկը մտածեցին, մտածեցին և իրենք էլ ծիծաղեցին իրենց վրա:

Ո՞վ էր ճիշտ ասում:

Ա. Լ. Ժ. — Ասողին էլ լսող պիտի:



64. Ախպեր ջան...

Զան, ջան,
ոսկի ֆինջան,
կարմիր մարճան,
ախպէր ջան:

Գարնան ծնած
խուճուճ գառն ես,
գարնան ծաղկած
վարդի ծառն ես,
ախպէր ջան...

Քամի

Քամի, դու փամի, խոփաւ արպերին, թո՛ղ
այր անպերին, թո՛ղ կանգնեն քաւին անշ-
րեի շիրեր, գրեն մեր արպեր:



Կայէ՛ք, այ անպեր, ինչո՞ւ է՛ք
փախչում, անշրե չէ՛ք քաւում,
մեր ծաւաւ արպեր օրեր են
կանքում ու չե՛ք ապաստում:

Քամին կանխարպեյ, մեղճ
անշրե քաւեյ, արպերը գրեյ: Կրպրը բարչ
բայաւ, ցօղուն արշաւեյ ու կաւկեր բռնեյ:



66. Ին ո՞վ ե...

Սոխակ ունի
իր գրկին,
վարդիկ ունի
իր սրտին,

արօտ դալար
ուսերին,
սարեակ, ծիծառ
ճղներին:

Շուտասելուկ. — էս էշին չո՞ւ ասա, էս էշին էլ չուտ չո՞ւ ասա:

67. Արագիլներ

Ձիւնը հալւեց, ջուրը մեծացաւ, հողը ծիլ տւեց, դաշտը կանաչեց: Կեռասենին բացեց իր բողբոջները. զարթեցին միջատները, երևացին թռչունները:



Հեռու աշխարհից, տաք երկրներից եկան արագիլներն ու առաջին անգամ ճահիճներին տես գնացին: Գորտերը վախից մտան ճմբերի տակ:

— Ինչո՞ւ են հէնց էստեղ գալիս, էս, էս երկար լուրդ լազլագները, — կռկռացին նրանք, — թող վեր ընկնէին իրենց տեղերը. կարծես կարմիր խնձոր ենք ուղարկել ետեւներից թէ՛ եկէք: Եկող էիք, ճմեռը գալիք, գոնէ երեսներդ չէինք տեսնի:

Խեղճ գորտեր, ճիշտ էին ասում, բայց լսողն ով էր: Արագիլները լուռ ու մունջ իրենց բանին էին, — որտեղ գորտ էին նկատում, իսկոյն հօպ, բռնում էին...

Ե՞րբ են գալիս արագիլները:

Որտե՞ղ են լինում գորտերը ծմերը:

Առա՞ծ են ք.— Որտեղ հաց, էնտեղ կաց:

Որտեղ տանձ կայ, պոչը հետն է:



68. Մանուշակ



Կապոյտ գլխով, կանաչ ոտով,
ես ծաղիկ եմ անուշ հոտով:
Թէև տունկա փոքրիկ է, ցած,
արօտներում միշտ թաք կացած,
բայց իմ փունջը ամենի տան—
թէ աղբատի, թէ մեծատան,
իբրև գարնան առաջին զարդ,
միշտ տեսնում է ամեն մի մարդ:
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
իմ անունս է մանուշակ:

Մանուշակից առաջ ո՞ր ծաղիկն է ծաղկում:

69. Արեգակին

Անցիր, սև ամպ, դու երկնքից,
բացւիր, երկինք կապուտակ
տխուր-խաւար թուխալի միջից
ցոլա՛, գարնան արեգակ:



70. Արեւը

Գարնան արևը վաղ զարթնեց ու ձէն տւեց.

— Է՛յ, քնածներ, վեր կացէք, աշխարհ լցւեց լուսն ու բարին:

Զարթնեց արտուտն ու ասաւ.

— Ես կերգեմ:

Վարդն ասաւ.

— Ես կը ծաղկեմ:

Մեղուն ասաւ.

— Ես կը համբուրեմ ծաղիկները:

Առուն ասաւ.

— Ես կը ջրեմ ծաղիկները:

Արևը ժպտաց ու ասաւ.

Երգիր երգդ, արտուտիկ. բաց թերթերդ, կոկոն վարդ. դու, ժիր մեղու, ծաղիկներին տես գնա՛, իսկ դու, առու, գնա ջրիւ ծաղիկ:

Ասաւ, չասաւ, արտուտն ելաւ ծըլւլաց, վարդը բացւեց բոյր տւեց, մեղուն թռաւ, ծաղիկները համբուրեց, առուն վազեց, ծաղիկներին ջուր տւեց:

Ինչո՞ւ լսեցին արեւին:

Էլ ո՞ւմ է զարթեցնում արեւը:

Ով ու՞ աչքը փուշ, ով չուստ, փորը կուշտ:

71. Լուսինն ու աստղերը


Պարզ գիշեր էր. աստղերը կանթեղի պէս մէկիկ-մէկիկ վառուում էին: Դուրս եկաւ լուսինը, ժպտաց ու ձէն տւեց.

— Բարեւ ձեզ, պայծառ աստղեր, ի՞նչ էք տեսնում երկրի վրա:

— Ես տեսնում եմ՝
առուն կարկաչուն
փայլուն շողերս
գրկում է փախչում,
քարէքար թռչում,—
ասաւ Գոհար-աստղիկը:

— Ես տեսնում եմ՝
շուշանը սիպտակ,
թերթիկները փակ
հանգիստ ննջում է
իմ շողերի տակ,—
ասաւ Շուշան-աստղիկը:

— Ես տեսնում եմ՝
թփի մէջ վարդի
ոստայնը սարդի,
սարդը երազում
ճանճեր է որսում,—
ասաւ Վարդ-աստղիկը:
— Ես տեսնում եմ՝
կարապը լճում,
բազերը ճահճում,
հանգիստ են առնում
ջրերի միջին,—
ասաւ Լուս-աստղիկը.



— Ես տեսնում եմ՝
հեզ նապաստակին,
ձորի վաստակին,
աչքը բաց քնած
եղևնու տակին,—
ասաւ Նազիկ-աստղիկը:



— Ես տեսնում եմ՝
անքուն մայրիկը
ընկած զոյգ ծնկան,
օրօր է ասում,
օրօրում մանկան,—
ասաւ Մայր-աստղիկը:

Լուսինն էլ, երբ տեսաւ մօրը ծնկաչոք,— ասաւ.
— Լռեցէք, աստղեր, մայրն է գեղգեղում,
թողէք մանկիկը ննջի իր տեղում:

Ինչո՞ւ ցերեկը աստղեր չեն տեսնում:
Հանելուկ. — 1. Էն ի՞նչ է. — Սիպտակ-փափախ հովիւը, մի սուրբ ոչխար ունի:
2. Հանք, հանք-հրամանք,
բերդի բոլոր մանրավանք:

Նշխարիում

Նշխարիումն էլ ինչ ասես, որ չը-
կան. ինչ գապաններ; ինչ բույուններ,
թիթեռնիկներ, բզեւներ, ինչ կերպ ծան-
փեր, որքան ոսկի ելնակներ, որք կա-
նալ զննարի պէս, որք կարմիր բու-
յի պէս. ապա մանրիկ բույրները,
հաւաքան, գնդասեղի գլխից էլ շար
փոփրը կայ:



73. Արտուտի երգը

Քեզ եմ գովում,
ծաղիկ գարուն,
ալ ու ալւան
ծաղիկ սիրուն:
Քո սեղանը
անհատներ
իմ ձագերին
կեր է տալի:



Իմ ձագերը
բնիդ միջին,
ձագս էլ, բունս էլ
ծոցիդ միջին՝
քեզ եմ գովում,
ծաղիկ գարուն,
ալ ու ալւան
ծաղիկ սիրուն:



74. Մեր քրեհները

Մենք ունէինք հինգ թթենի,— մէկը բակում, չորսը փողոցում:
Չարաճճի մանուկները հանգստութիւն չէին տալիս խեղճերին:

Ով ճարպիկ էր, բարձրանում էր նրանց վրա թուլթն ուտում,
ով չէր կարողանում, ցածից բար ու փայտ էր գցում, թուլթը թափում,
ճղները կտորատում: Ել չէին սպասում, որ թուլթը հասնի,
կարգին թափ տանք և բաժանենք ամենքին:

Այդ բանը սաստիկ վշտացնում էր ինձ:

— Տղերք, — ասում էի ես, — որքան ուզում եք թուլթը կերէք, բայց
ծառերի ճղները մի կտորատէք: Մեղք է...

Ե՞րբ է լինում թուլթը: Թթից լնչ են շինում:

Ա. ո. ա. ծ. — Քանզե՛լ ամեն մարդ կարող է, շինել՝ բշերը:



75. Քամի

Քամի, քամի, դու անեղ,
էն երկնքի ամպերը
հալածում ես ամեն տեղ:

ալեկոծում ծովերը,
ու տարածում սար ու ձոր
քո անուշիկ հովերը:

76. Ձէյրանի սիրուն

— Հէյ, Անուշ, Անուշ, ձեր Ձէյրան երինջը ձորն ընկաւ, ձորը,
հասէք, հասէք:

Էս որ լսեց Անուշը, խելքը գլխիցը թռաւ, իրեն էլ մոռացաւ,
աշխարհն էլ: Երինջը հորթ ժամանակից նրա սիրելին էր:



Անուշն էլ չիմացաւ թէ ինչպէս ինքը
զուրկեց դէպի ձորը, ոչ քար էր հարցնում,
ոչ թուփ, ոչ փոս... քիչ յետոյ նա արդէն
ձորումն էր:

Խեղճ Ձէյրան, առաջի ոտքերն ու
զուլխը տակն էին քնացել: Անուշը վրա
վազեց, զուլխը հանեց տակիցը. ոտքերը
ուղղեց, դունչը պաշեց, աչքերը պաշաշեց.
ուղեց վերկացնել, բայց Ձէյրանի մէջքը կոտրւել էր... Անուշն սկսեց
լաց լինել...

Եկան Ձէյրանին մորթեցին, քերթեցին ու տարան:

— Մինչև էդ միսը չուտէք, ես մեր տուն եկողը չեմ, երգեց
Անուշն ու երկու օր իրենց տուն չը մտաւ:

Դու ո՞ւմն ես սիրում՝ ձեր տանը:

77. Բկիկ-ձկնիկը

Ձկնիկ, լո՛ղ տուր, լո՛ղ արա,
դրսի որսը թող արա,
իջիր ջրի յատակը,
մինչև անցնի վտանգը:



Տես, փորձանք կայ քո գլխին,
մի լաւ մտիկ երեխին. —
որդ է խրել սուր կարթին,
չը մօտենաս էն որդին:


Ինձ չը լսեց շէկիկը,
ինձ չը լսեց բկիկը,
հօպ, կուլ տուց նա որդը,
կարթը մնաց կոկորդը:

Էլի՛ ինչու՛ են ծով որսում: Ո՞րտեղ են որսում: Ի՞նչ տեսակ ձկներ գիտէք:

Ա. ո. ա. ծ. — Սկին սապոնն ինչ անի, խկին խրատն ինչ անի:
Իմացողին մին, չիմացողին՝ հազար ու մին:

Ննկոյց

Ննկուպենին ընդարշակ ցարածել էր իր ֆի-
դերը: Ննչակը պառկել էր նրա քովը:



— Զարմանալի բան է, ասում էր
նա, էս ահագին ժառը քեռ, իր
պրուդը քեռ: Արա պրուդը դը

դուսից էլ մեծ պէտք է լինէր:

Ասա-յասա՛ մի ընկոյց պուկեց, ընկաւ իրեն
արնաքրեց:

— Վայ, վեր քոսա ընչակը, ինչ լաւ էր դրում
չէր, թէ չէ գլուխս կը զարդէր:



79. Ա. յ գ ի

Կանաչիւր, կանաչիւր,
իմ սիրուն այգի,
կանաչ ու կարմիր,
խառ շորեր հագի:
Գարուն ու հաւքեր
եկան բեզ համար,

կանաչիւր, այգի,
անշուք մի մնար:
Կանաչն ու կարմիր
նշան են կեանքի,
զարունդ է եկել,
կանաչիւր, այգի:

Այգիներում ինչ ստուգներ են հասնում զարնանը:

80. Շողիկի երազը

— Ախ, մայրիկ, ինչքան լաւն է արեւը, ինչ կը լինի առաւօտը
վաղ զարթեցնես, տեսնեմ ինչպէս է դուրս գալիս նա:

— Լաւ, Շողիկս, կը զարթեցնեմ, — ասաւ մայրիկը, — հիմա քնիր:
Գիշերը Շողիկը երազում լսեց, որ թխկացնում են լուսամուտը. —
Թը՛խկ, Թը՛խկ, Թը՛խկ:

— Ո՛վ ես, — հարցրեց Շողիկը երազում:

— Առաւօտայ հովիկն եմ, շուտով
արեւ դուրս կը գայ, տես, չըքնես մնաս:
Քիչ յետոյ դըսից տղոց լսեց:
— Բզէզներ ենք, եկել ենք ասելու,
որ արեւ շուտով դուրս կը գայ, տես
չը քնես՝ մնաս:

Քիչ յետոյ էլ լսեց մի անուշ
ծըլւըրոց:

— Շողիկ, ես արտուտիկն եմ, հեռից տեսայ արեւի շողերը,
եկայ քեզ իմաց տամ:

Շողիկը շուռ ու մուռ եկաւ ու ասաւ.

— Թող արեւը քիչ սպասի, քունս տանում է:

Արտուտը որ գնաց, կեռասներու ձիւղերը լուսամուտից մտան
Շողիկի ննջարանն ու ասացին.

— Շողիկ, տես ինչպիսի կարմիր կեռասներ է տւել մեզ արեւը.
զարթիր, առ, քեզ ենք բաշխում:

Շողիկը հէնց որ ուզեց ձեռքը մեկնի, մէկ էլ մի տաք բան
կպաւ նրա թշերին:

— Բարեւ, աղունիկս, տես, դու չեկար, ես եկայ, վեր կաց, վեր
կաց, ես կարմիր արեւն եմ:

Շողիկը բացեց աչքերն ու ասաւ.

— Վայ, մայրիկ, քնել-մնացել եմ, ինչո՞ւ դու ինձ չը զարթեցիր,
որ արեւն եկաւ զարթեցրեց:

Չեզանից ո՞վ է երազ տեսել:

Ա. ո. ա. ծ. — Սովածը երազում հաց կը տեսնի, ծարաւը՝ ջուր:

81. Օրհնի բո սարը

Սարի զաւարտութիւնը Եր բոխում:
 Ծարաւ ճամփորդը խմեց չաղբիւրից ու ասաւ:
 — Օրհն, սիրտս հովացաւ: Օրհնի բո սարը...
 Սարի լալիքերը ծածկել էր թելիչ կանաչը:
 Ոչխարի հօտը արածեց շաղոտ խոտը, նստեց ու որոճաց:
 — Օրհն, կերանք, կշտացանք: Օրհնի բո սարը...
 Սարի փեղեկներն անասաւ Եր բուսել:
 Սղոյի արտաւր զաւարտութիւնը, կապեց ու ասաւ:
 — Շէն մնաս, անպատճառ: Օրհնի բո սարը...
 Սարի կապոճքը լիքն էր հանքերով:
 Բանաւորը մուրճով քանդում էր հողը, հանքերը հանում ու հիւս-
 ցած ասում:

— Ի՞նչ հարստութիւն... Շէն մնաս, ան սար...
 Սարի զաւարտութիւնը երկինք էր հպել:
 Սրճիւն եկաւ նստեց զաւարտութիւն, նայեց չորսւկողմն ու ասաւ:
 — Ես բուն կը դնեմ բարձր զաւարտութիւն: Օրհնեք ան քնք:

— Ես բուն կը դնեմ բարձր զաւարտութիւն: Օրհնեք ան քնք:
 — Ես բուն կը դնեմ բարձր զաւարտութիւն: Օրհնեք ան քնք:

82. Օրհնի

Սրտն ու անգոստանը յգոճ ինքնուրեք յիշերո՞ւ
 պարտէզն ու բոստանը, եզն ու գոմէշը աղմ ապրի
 Կախող շաղաղը, ծառն ու ճիւղը, ծառն ու ճիւղը
 պանիրն ու հացը: բերքն ու պտուղը
 Ձին ու ջորին, էծն ու ոչխարը,
 խոտն ու գարին, ուլիկն ու գառը:
 Ինչո՞ւ օրհնին:

Շուտանելուկ. — Սեխով թռչեմ՝ սեխ ուտեմ, ցեխով թռչեմ՝ սեխ ուտեմ:

83. Խոտհուն

Ա՛յ իմ դաշտ արձակ,
 արձակ-ընդարձակ,
 քեզ հիւր եմ եկել,
 եկել եմ ոտով,
 մենակ չեմ եկել,
 եկել գերանդով:
 Զնգա, գերանդի,



շողան ետ, առաջ,
 աղմկիր, ընկիր,
 ան հնձած կանաչ:
 Ծուէք, ծաղիկներ,
 ծուէք դէպ գետին,
 խոտի հետ ձեզ էլ
 կտրեց գերանդին:

Ի՞նչ խոտերի անուն գիտէք:

Ն՞րք է լինում խոտհուն՞ը:



84. Խխունցն ու սունկը

Նստել է խխունջը սունկի վրա, բարկանում է, նեղանում ու
 անցնողին նախատում:

— Էս ի՞նչ է թռչկոտում՝ ճպոտ ճպուռը, ասես չի կարող ինձ
 նման ծանր ու մեծ նստի:

Թիթեռները թռթռում են, թռչնակները ծրլւրլում, խխունջը
 նորից կատաղում է:

— Սրանք ի՞նչ են թռչում, թռչկոտում, ի՞նչ են երգում, էլ ու-
 րիշ գործ չունեն: Ա՛յ, ուրիշ բան եմ ես, ոչ թռչկոտում եմ, ոչ
 երգում: Թռչելու որն է, երգելու ո՞րը:

— Է՛, բուրիկ խխունջ, հառաչում է սունկը, գիտե՞ս ինչու ենք
 լուռ ու մունջ մնացել էստեղ, ոչ թռչել գիտենք և ոչ էլ երգել:

Ինչո՞ւ եր բարկանում խխունջը:

Ծի՞շտ էր ասում սունկը:

Հանելուկ. — Սկ է սաթի նման,

սիպտակ է կաթի նման,

պոչը՝ խաչ-երկաթի նման:

85. Պատմեցէք այս պատկերի բովանդակութիւնը



1. Տարապ ո՞ր եղանակն է պատկերացնում՝ այս նկարը:
2. Ո՞վքեր են սրանք եւ ո՞րտեղից են գալիս:
3. Ի՞նչու է շալակել փոքրիկին, ի՞նչ ունի փոքրիկն իր ձեռքին:

Զբօսանքին

Երկու ընկեր՝ դասընկեր, երեկոյեան զբաղմունքի վերջացրին, շրապով ընթրեցին ու գնացին զբօսնելու: Երկուսի ճօրով անցնելիս Գարեգինն ասաւ.

— Արեւիսն, սպասիր, րեւ ինչ երկար սպեք ներ ունենի:

— Քիչր որ, Գարեգին, եթէ մենի էսպի լինելիս, մեր րներն ինչ չափի պէտք է լինելին:



87. Դաշտի ծաղիկը

Բացւել, կարմրել էր դաշտի ծաղիկը. լացւում էր կենսատու ցօղով, լողում էր արեւի պայծառ շողերի մէջ և նայում էր կապոյտ երկնքին:



Վեր կացաւ քամին, դարձաւ փոթորիկ, դաշտն ալեկոծեց... Արեւ դարձեալ փայլում էր վերից, երկինքը կրկին նայում էր ծաղիկին:

Միայն ծաղիկն էր պոկւել ցօղունից և թերթիկները թափել չոր գետնին:

Քամին էր պոկել... էլ ծաղիկ չըկար...

«Ա. ո. ա. ծ. — Ամեն ծառ իր արմատին չորանայ:

88. Արեւն ու ծիածանը

Անձրեկից յետոյ ծագեց արեւն ու ծիածան կապեց:

—Նայիր ինձ, բեզնից գեղեցիկ եմ.—ասաւ ծիածանն արեւին,—
տես քանի գոյն ունեմ.—կանաչ, կարմիր, կապոյտ, դեղին...

—Բայց գիտե՞ս, որ ես եմ բեզ այդքան գոյն տուողը,—ասաւ
արեւը:

—Դ՞հա... սո՛ւտ է,—ժպտաց ծիածանը:

—Սո՛ւտ է,—ասաւ արեւն ու մտաւ ամպի տակ:

Արեւն ամպի տակ մտաւ թէ չէ, ծիածանն էլ անհետացաւ:

Առաժնեք.—

Ինչ որ չը գիտես՝

մի խօսի:

Շատ իմացի՝ քիչ


խօսի:

Հանելուկ.—

Երկու գոյնից մի

անուն, եօթը

գոյն են միանում:



89. Ծիածան

Մթին ամպերից

եկաւ յորդ անձրե,

պարզեց երկինքը,

ծագեց լոյս արե:

Կանաչ ու կարմիր

կապեց ծիածան,

ջրի կաթիլներն

ալ գոհար դարձան:

Քամին հանդարտեց...

չը կայ էլ փոշի,

հողը տաքացաւ,

միայն գոլորշի:

Շուտ ասե՛լուկ.—

Վարդ պատկերս՝ վարդ պատկերիդ վարդ պատկերս



90. Թռիսը

Չալ հաւը կը ուրխտում էր...

—Թռթռուշիկս թռիս է գալիս,—ասաւ մայրիկը,—վեր կենամ
տեսնեմ, որտեղից եմ ձու ճարում, որ թռթռուշիկիս տակը դնեմ:

Գնաց, հարևաններից մի տաս-տասնըհինգ ձու փոխ առաւ,
բերեց տուն: Մաղի մէջը դարձան ածեց, ձւերը դարսեց, Թռթռու-
շիկին էլ նստեցրեց ձւերի վրա:

Երեք շաբաթ թռիսը վեր չէր կենում ձւերի վրայից: Միայն
կուտ ուտելու և ջուր խմելու համար էր դուրս գալիս մաղից:

Կուտն ուտելուն պէս՝ նորից մտնում էր
մաղը, ձւերը շուռ տալիս, խնամքով նրս-
տում, որ ձւերը միակերպ տաքանան:



Տաքութիւնից ձւի գեղնուցի մէջն ե-
ղած սաղմը դարգացաւ, արեան բիծ դար-
ձաւ, շղեր արձակեց ու տարածւեց ամեն
կողմ:

Արեան բիծը մեծացաւ, մեծացաւ ու
վերջը մերկ ճուտ դարձաւ, երեք շաբաթից
յետոյ ճուտը կոտրեց ձւի կեղևը ներսից
ու դուրս եկաւ լոյս աշխարհ:

Բոլոր ճուտիկներն էնպէս մէկ-մէկ դուրս եկան իրենց ձւերից:
Մայրիկը ալրաշագախ արեց, փշրեց առաջները, ամանով էլ
ջուր դրեց, որ խմեն: Շատ ծիծաղելի է նրանց ջուր խմելը...

Կանգնում են ամառի ափին, կտցով ջուր վերցնում, յետոյ
գլուխները վեր բարձրացնում ու կուլ տալիս: Հէնց որ նրանք ու-
տում-խմում կշտանում են, վազում են իրենց մօր մօտ:

Մայրը նստում է դետնի վրա, ճուտիկներին անում թեկերի
տակ ու ծւարում են միասին:

Ուրիշ ինչ թռչուններ գիտե՞ք թռիսն եկող:

Հանելուկ.—Հաւն իր ձագը կը օիրի, օճն իր ձուտը:

Վարդան սպին

Վարդան սպին ու Վահանը հանդուժ կո-
վեր էին պահում:



— Վահան, Վահան, — ահա սպին,
կամ դու վապերով գնա կովերը
եւր քուր, եւ հայ ուրեմ, կամ
եւ հայ ուրեմ, դու վապերով գնա
կովերը եւր քուր:

Ա՛ր օրավար վար արա, ի՞նչ սե օրին փար արա:

92. Խելօք տատը

ա.

— Ձո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ... իմ ճուտիկներ...
ջուխտ-ճուտիկներ, չըտ-չըտիկներ,
չալիկ-մալիկ, չալ վառիկներ,
թըխիկ-մըխիկ թուխս մարիկներ,
կարմիր կատար աքաղաղներ,
աղբանոցի դուբ աղաններ...

Հրամմեցէք,
կուտ համեցէք,
կուշտ-կշտացէք.
կուշտ-կշտացէք,
կըղ-կղացէք:

Ձուխտ, ջուխտ, ջուխտ...
ջուխտ, ջուխտ, ջուխտ...

բ.

— Տատի ջան, էսօր Չալիկս չը կայ,
մուլթն ընկաւ, ո՛ւր է, ի՞նչու տուն չի գայ:
— էսօր էլ, տատի, Թխիկս չը կայ.
ինչքան ման եկայ, դոնէդուռ ընկայ:
— Գնա՛, բալիկ ջան, քնի՛ր, բան չը կայ,
առաւօտ համրեմ, էլի ջուխտ կը գայ:



գ.

— Ձո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ... իմ ճուտիկներ,
ջուխտ-ճուտիկներ, չըտ-չըտիկներ,
չալիկ-մալիկ թուխս մարիկներ,
կարմիր կատար աքաղաղներ,
աղբանոցի դուբ աղաններ:

Հրամմեցէք,
կուտ համեցէք,
անուշ արէք,
կուշտ կշտացէք.
կուշտ կշտացէք,
կըղ-կղացէք...

Ձուխտ, ջուխտ... վա՛յ բռանամ, կէնտ է գալիս,
ջուխտ, ջուխտ... վա՛յ չորանամ, հողը հալիս,
էս ի՞նչ փորձանք եկաւ հաւիս,
սխալեցի՞ ես համրելիս:
էս հասակիս, ոնց խենթացայ,
ջուխտ ու կէնտը չը հասկացայ:

Ա. ո. ա. ծ. — Ձուն իր ծայրին չի կանգնի:

93. Նանի աղօթքը

Մեր Սանդուխտ նանը ամեն իրիկուն
անկողին մտնում, աղօթք էր անում։—

—Տէր Աստուած ջան,
սև ուրուրից,
բոռ արխից,
գող աղւէսից,
ցաւից, չոռից,
չոլամակից

դո՛ւ պահպանիր
կարմրակառար
աբլորիկիս,
թխիկ-մխիկ
թուխ մարիկիս,
չալ-չալիկիս...

Ով ձեռք տայ իմ պահած ձագին,
ոտը կոտորի, կտրի ազին։

Բ ա ո ա խ ա դ.— Դաւիթ, Դաւիթ, կուտ տուր հաւիդ։



94. Աստծու բաշիկը

Աստծու բաշիկը մի սիրուն, կարմրաթուշիկ, շարմաղիկ մանուկ է։
Առաւօտեան վաղ լուսի պէս ծագում է ու անցնում դաշտով։

Որ անցնում է դաշտով՝ ժպտում է ու ճիտ անում պատահողին։

Որ ամպն է վազում՝ բաշիկն է տապ անում։

Որ բաշիկն է տապ անում՝ ամպն է տխրում, լաց լինում, ու
պուտ-պուտ արցունք թափում։

Որ ծառին է նայում բաշիկը՝ ծառն է դալարում։

Որ ծաղկին է նայում՝ ծաղկին է շողում-շողշողում։

Որ արտին է նայում՝ արտն է դեղնում, դեղին ոսկի կտրում։

Որ աղբիւրին, առւին, գետին է նայում՝ ջուրն է ցոլում, ցոլ-
ցոլում։

Աստծու բաշիկի լուս-երեսին չես կարող նայել, աչք է ծակում,
աչք է ծակծկում, ասեղներ ունի։

Թէ ասես Աստծու բաշիկի անունն ինչ է։

Հ ա ն ե լ ու կ.— Էն ի՜նչն է. մի թաւի մէջ երկու ձուկ,
մինը սառն է, մինը տաք։

Սեգումի խրատը

Մի դարևոր կաշնու ցակ խոյր ագահ
ու անյագ էնխն կաշին ցխուէց, որ ցած
րնկաւ ու փուէց. փուէց, ցուէց ու փէց։

Քնէց, փնէց, որ զարթնէց՝ դունչը ցարաւ
ու մէկից ձառը փորէց արմարից։

—Քո արածը, սպասէ, չէ՞ որ ձառին վնաս է,
կը չորանայ արեից, սեգումն ասաւ վերից։

96. Ուղտաբեյա

Էլաբելա,
ուղտաբելա,
լօխմա կըտամ,
չամչաբելա։



Ոտներ ունես՝
մի գազ ու կէս,
պոչդ կարծիկ,
չի սագում քեզ։

Վիզդ ձիգ-ձիգ,
չինարի ծառ,
մէջքդ կուզիկ՝
բլուր ու սար։

Ո՛ւր որ բշեն,
սանձդ քաշեն,
լոլոզ-լոլոզ
կերթաս անխօս...

Հ ա ն ե լ ու կ.—
Էն ի՜նչն է՝ լցնում եմ,
լցնում՝ չի լցում։

Էլաբելա,
ուղտաբելա,
լօխմա կըտամ,
չամչաբելա...

Ա. ո. ա. ծ.— Ուղտին ասին՝
—Ինչո՞ւ է վիզտ ծուռը,
ասաւ՝ ինչս է շիտակ, որ
վիզս շիտակ լինի։

97. Ծիտն ու որբերը

(Հ է Բ Ի ա Բ)

ա.

Մի աղքատ այրի
երկու որբ ունէր
մի սովի տարի:
Երկու որբ ունէր. —
Հրաչ ու Հեղուշ,
վեց-եօթ տարեկան,
մէկ-մէկից անուշ:
— Սոված ենք, սոված,
նանի, մի ճոթ հաց...
Հաց էին լինում,
մօր փէշից բռնում,
ետեից գնում:
Հաց չունի նանը,
հրաեղից բերի,
ինքն էլ է բաղցած,
մի փորի գերի:

Սովի տարի է, էլ ի՞նչ դուռ-դրկից,
էն խղճուկ այրին չունի կարեկից...
Մի օր ճարահատ սովատանջ մէրը՝
ետեից գցած իրեն որբերը,
լացով ու թացով մտնում է ձորը:
Իր երկու անգին սիրասուն ձագին
առնում է ծնկան, չի թողնում, որ լան:
Ու խորը ձորում, իրենց մօր գրկում,
քնում են մուշ-մուշ Հրաչ ու Հեղուշ...

բ.

— Երկնքի հաւքեր, —
ասում է մէրը. —
էս երկու բալիս
արէք ձեզ ընկեր, —
ասում է լալիս, —
խղճացէք սրանց,
մի թողնէք սոված:
— Դաշտի գազաններ,
դուք էլ մայրեր էք,
էս սովի տարին
դուք էլ խղճացէք,
էս իմ որբերին:
Ասում է նանը
երեխանց պաշում
ու վեր է կենում
ձորիցը փախչում:

գ.

Թէ շատ են ննջում,
թէ քիչ են ննջում,
Հրաչն ու Հեղուշ էն ձորամիջում,
մէկ էլ զարթնում են, որ նանը չը կայ:
Ու վեր են կենում, բռնում մի ճամփա:
Մի ոլոր ճամփա,
մի մոլոր ճամփա:
Պնում են, գնում ու նանի կանչում...
Մէկ էլ մի թռչուն էսպէս է ասում. —

— Ինչո՞ւ կուլաք	գիշերն ինձ հիւր,
հոնգուր-հոնգուր,	ձեզ տեղ կը տամ
փունջ-մանուշակ	ծառիս տակին,
ախպէր ու բուր:	ձեզ հաց կը տամ
եկէք գնանք	արեւագին...

դ.

Առաւօտը՝ արեւագին՝
ծիտիկն իջաւ ծառի տակին.

— Գնանք, — ասաւ, —	ունենք մենք մի
անթիւ ձագեր,	բարի տատիկ,
Հրաչ, Հեղուշ,	որ ամեն օր
անհէր, անմէր:	խաշած հատիկ
եկէք գնանք	փեշը լիբը
ծառի տակից,	հանդն է գալիս
եղէք դուք մեզ	ու մեր առաջ
սեղանակից:	շաղ է տալիս:

ե.

Հրաչ ու Հեղուշ
բաղցած ու անուժ
Ելան գնացին ծառի հետ սեղան,
տատի հատիկին մասնակից եղան:

Տատը որ տեսաւ
երկու երեխին,
վազեց ու ասաւ.—
—Մատաղ ձեր գլխին...

Երկու թոռնիկ ես ունէի,
նրանց ցաւը ես տանէի...

Հիւանդացան
ծոցիս միջին,
հիւանդացան
ու ննջեցին:

Ձեմ հաւատում
նրանք մեռան,
այլ ծտերից
թներ առան.

Թներ առան, ծտեր դառան,
ծտեր դառան, դէս-դէն թռան...

Գնանք, եղէք
դուք ինձ թոռնիկ,
ձեզ չեմ թողնի
սովից մեռնիք:

Գ.

Որ անցկացաւ սովի տարին՝
բալի կարօտ էն խեղճ այրին
եկաւ ընկաւ սար ու ձորեր,
լացեց, կանչեց.—Այ իմ որբեր,

Հրաչ, Հեղուշ,
Ռւր էք, դուք Ռւր,
ազիզ բալէք,
ախպէր ու քուր:
Մնացել եմ
ձեր կարօտով,
Հրաչ, Հեղուշ,
համով, հոտով:
Մի լուր տւէք,
նախշուն հաւքեր,

Իմ որբերին
անտուն անտէր,
գազանները
գտան կերան,
թէ՞ գետերը
առան-տարան,
Գուցէ մէկը
իր հօր խէրին
հաց է տալիս
իմ որբերին:

Է.

Ծիտը վերից ասաւ.—Նանի,
էղբան էլ շատ սուգ մի անի:

Հրաչ, Հեղուշ, երկու գառնիկ,
բարի տատիս եղան թոռնիկ:

Արի տանեմ որբերիդ մօտ,
էլ մի մնա բալի կարօտ:
Ծիտը իջաւ տատի կտրան,
նանը կանգնեց տատի դռան:

Ծիտը երգեց.—


—Ախպէր ու քուր,—
Հրաչ-Հեղուշ,—
ձեզ բարի լուր.
ձեր մէքն եկաւ
բոբիկ ոտով,
ձեր մէքն եկաւ
ձեր կարօտով:

Եկէք, տեսէք
դուք ձեր մօրը,
մի մոռանաք
էն սե օրը՝
ծառի տակին
ձեր ծիտիկին
ու մեզ պահող
ծեր տատիկին:

Հէնց որ երգեց տան կտրանը,
իր որբերին գտաւ նանը.
Իր որբերին՝ Հրաչ-Հեղուշ,
փունջ մանուշակ, անուշ, մեղուշ:

Անգրագէտ :

Ահի, գթայէ՛ գեղուկ որբիս,
մի լաւութիւն գէթ արէ՛.
Կւէ՛ մի քերթ ինչ ձերմակ թուղթ,
մի փեպուրէ գրիչ կւէ՛.
Ե ինչ գրէ՛ սովորցրէ՛:



—Էմմա, Էմիլ, Վալ, խնամի՛ն նաքեց կամի՛ն:

99. Մարդը

Փազանն ասաւ.—

—Այ մարդ, զգուշացիր, պատառ-պատառ կանեմ քեզ: Դու ո՞վ ես, որ ինձ փնտա տաս, տեսնում ես իմ ժանիքները:

Թռչունն ասաւ.—

—Այ մարդ, ես թե ունեմ, թռիչք ունեմ, դու ո՞վ ես, որ ինձ փնտա տաս: Էնպէս կը թռչեմ, բերանդ բաց կըմնայ:

Ձուկն ասաւ.—

—Այ մարդ, ես լողնակ ունեմ, լողալ գիտեմ. կը սուզւեմ ջրի յատակը, դու ո՞վ ես, որ ջուրը մտնես ու ինձ բռնես:

Ճիճուկն ասաւ.—

—Ինձ ի՞նչ կայ... կը մտնեմ հողի մէջ ու կը թաքնւեմ. էն ո՞վ է, որ ինձ գտնի, թէկուզ գտնեն էլ՝ ես ինչի՞ պէտք եմ:

Մարդը, որ լսեց, հրացանն ուսը գցեց, առաւ թակարդը, շալակեց ցանցը, վերցրեց բահը, դուրս եկաւ տնից իրեն շան հետ ու գնաց որսի:

Որոնեց, որոնեց... գտաւ գազանին, հրացանն արձակեց ու ըս-պանեց նրան:

Թակարդը դրեց, մէջը կուտ ածեց, խաբեց թռչունին ու բռնեց նրան:

Բահով փորեց գետինը, ճիճուկն հանեց, կապեց ցանցից:

Ցանցը գցեց գետն ու ձուկը բռնեց:

Ո՞վ էր ամենից հնարագէտ:

100. Եզր ջան...

Արի գնանք, եզր ջան,
համ վար անենք, համ էլ ցան.
աշխատանքի օրերը
ահա եկան մօտեցան:
Դու գութանը կը քաշես,
ես մաճկալդ կը լինեմ,

էն գլխիցը մենք էսպէս
ընկերով ենք պահել մեզ:
Արի գնանք, վար անենք,
համ վար անենք, համ ցանենք,
դառը քրտինք թափելով՝
մեր ցաւերին ճար անենք:

101. Ծով դառել

Յորեն եմ ցանել հետ գութնի ալին,
ելել ծով դառել արեւի տակին:

102. Ուրախ եմ

Մի թռչնորս երկու թռչուն էր ծախում: Խեղճերը վանդակի մէջ թրրալըրտում ու ժըլժըլում էին:



—Ի՞նչ արժէ ամեն մէկը,—հարցրեց մի մարդ:

—Տասը կոպէկ,—պատասխանեց թռչ-նորսը:

—Մէկն ինձ տուր,—ասաւ նա:

Տասը կոպէկը տւեց, թռչունն առաւ, շոյեց ու բաց թողեց:

—Էդ մէկն էլ տուր, առ քո տասը կոպէկը:

Էն մէկն էլ գնեց, շոյեց ու բաց թողեց:

—Ինչո՞ւ էդպէս արիր, պարոն, զար-մացած հարցրեց թռչնորսը:

—Է՛, սիրելիս, ութ տարի բանդ եմ նստել, գիտեմ թէ ինչ բան է բանտի կեանքը: Ես սրտով ուրախ եմ, որ ազատութիւն տւի նրանց:

Հանելուկ.—Էն ի՞նչն է.—Մի թռչուն թոցըի՛ բռնել չը կարողացայ, մի հին մուշտակ հագայ՝ հանել չը կարողացայ:

103. Սոխակը վանդակում

—Ինչո՞ւ, իմ սոխակ,
չես ուտում կերդ.
ինչո՞ւ չես ասում
անուշ երգերդ:
—Երգում էի ես
ճիւղիցը դալար,
ոսկէ վանդակում
լուռ եմ միալար:



Դալար ճղնիկը
ասում է.—ապրի,—
ոսկէ վանդակը
ասում է.—մեռի:
Ընկերս ճիւղից
ինձ է ափսոսում.
ձագերից զրկւած՝
էլ երգ չեմ ասում:


—Բաց կանեմ, սոխակ, դուռը վանդակիդ,
թիկդ տո՛ւր, թռիր, հասիր ձագերիդ...

Սոխակն ինչու չէր երգում վանդակում:

Ո՞րն էր լաւ ոսկէ վանդակը, թէ դալար ծիւղը:

Առաժ.—Լաւութիւն արա՛, ջուրը ձգի, ձուկը չիմանայ, Աստուած կիմանայ:

իմ որդին



Թող որսդ, արի,
խաղաւորս բաւէ.

ին երգը գուցէ
իմ որդին կուպէ.

բաւէն որ եկաւ իմ որդին լռեց,
ուսկն երգերի չայնովը փնեց:



Ահա՛ւ. Ահա՛ւ ճորթուս, յետոյ որդուս:

105. Զատիկը

Զատիկը մեր հին ծանօթն է: Նա մի կարմրաթեւիկ, կլորիկ մի-
ջատ է, ասես կարմիր կոճակ լինի: Շատ բարի է, շատ խելօք... Որ
անուամ ես բռնի մէջ ու ասում.—

Զատիկ, Զատիկ,
ոսկեհատիկ,
տես, մէկ, երկու,
երեք, չորս, հինգ..
Դէ շոտ արա,

Թո՛ւ երկինք,
տար երկնքին
մեզնից բարե,
ասա մեզ տայ
անձրե, արե...

Ճիշտ որ՝ Զատիկը թեւերը բաց է անում ու թը՛ռռռ... թռչում:

106. Անուշ լեզուին

Արեգակը երես ձեւէր,
լուսնեակը աստառ ձեւէր.

վառ աստղերը կոճակ արեք,
ծով երկինքը օդակ արեք,

անուշ լեզուին ընծայ տւէք...

107. Ծիծեռնակին

Դու կապուտակ ծովով արի,
թեթե, թեթե թևով արի,
ծովի փրփուր լանջով արի,
գարնան երգով, կանչով արի...
Արի, արի, սիրուն ծիծեռ,
արի, արի, գարուն դու բեր:

Սևիկ-մևիկ աչիկ ունես,
մկրատածե պոչիկ ունես,
ծովի փրփուր լանջով արի,
գարնան շնչով, կանչով արի...
Արի, արի, սիրուն ծիծեռ,
արի, արի, գարուն դու բեր:

Ծիծեռնակով գարուն կը գայ,
անծիծեռնակ գարուն չը կայ,
ծովի փրփուր լանջով արի,
գարնան շնչով, կանչով արի...
Արի, արի, սիրուն ծիծեռ,
արի, արի, գարուն դու բեր:

108. Սոխակը

Սոխակը հիւսեց իր բունը ընկուզենու ճիւղի վրա: Զու ածեց,
թուխս նստեց, ձագեր հանեց: Յերեկը ճանճեր, մոթեղներ, միջատ-
ներ էր որսում ու կերակրում իր ձագերին:

Փոքրիկ ձագերը ժլժլում էին, երբ մայրը կերակուր էր բե-
րում, ուտում էին՝ կշտանում և քնում փափուկ բնի մէջ: Էդ ժա-
մանակ մայր սոխակն էլ էր հանգստանում:

Երեկոները մի անգամ էլ կերակրում էր ձագերին, նստում էր
ընկուզենու խիտ տերեւների մէջ ու երգում:

Նա գովում էր խաղաղ գիշերը, կանաչ դաշտերը, պայծառ գե-
տերը, ծաղիկները, աստղերը և լուսինը... Նրան լսում էին իր ձա-
գերը և ամբողջ անտառը...


Ի՞նչ գոյն ունի սոխակը: Ո՞վ է լսել սոխակի երգը:

109. Ծաղիկների երգը

Մեծ գոլն*) ընկաւ, ձընհալն ընկաւ,
հողը շնչեց, գեփիւռն եկաւ...

Ա Ր Ե Ն Ը

—Այ աղբիւրներ,
այ գետակներ,
սառցի ներքե
քընամծ էք դեռ.
դժուրս եկէք, դժուրս,
շուտ դէպի լուս...



Ջ Ր Ե Ր Ր

—Վո՛ւշ-վո՛ւշ, վո՛ւշ վո՛ւշ,
էս ինչքան ուշ...
Աղջի, աղջի,
ծիւ-ծաղիկներ,
քանի բընէք,
վեր կացէք, վեր...

Ծաղիկները

—Բարե՛ բարե՛,
կարմիր արե,
ախ, ինչ լաւ է
դէպի վերե.—
ազատ, լոյս, տաք,
կապուտ, յըստակ...



Ա Ր Ե Ն Ը

—Սիրո՞ւմ էք ինձ...
Ծաղիկները
—Ախ, էնպէս եմ
սիրում, էնպէս,
էլ առանց քեզ
չեմ ապրիլ ես...



—Ես քեզ հետ եմ
ուր որ գընաս...
—Ես կը տխրեմ,
որ հեռանաս...
Ա Ր Ե Ն Ը
—Ապա եթէ ձեզ
համբուրեմ:

*) Մեղմ տաքութիւն.

Ծաղիկները

—Ես հաճոյքից
կը կարմրեմ...
—Ես կը բուրեմ...
—Ես կը մարեմ...


Աղջիկը

—Էս ինչ անթիւ
ծաղիկներ կան.

ոսկի, դեղին, կարմիր, դեղձան...
բացւել, լըցւել, ծաղկել են վառ,
ողջ ինձ համար, ողջ ինձ համար:

Ա ո ա ծ.—Աղբիւր շինէ, ջուր խմես:

Ծառի տակին պաղ աղբիւր, արծաթէ թաս, ոսկէ ջուր:



110. Դաշտի վարդը

Փոքրիկ տղան
մի վարդ տեսաւ,
սիրուն վարդը
դաշտի միջին.
ուրախ-ուրախ
շուտ մօտեցաւ,



որ լաւ նայէ
սիրուն վարդին.
Այ իմ վարդին,
կարմիր վարդին,
կարմիր վարդը
դաշտի միջին:

Բ ա ո ա խ ա դ.—Խչէ, Խչէ, գուռնա փչէ, ուզածդ ինչ է...—Մի չամիչ է:



Դասօր եղևերը

Ահա ծագեց կարմիր արև,
 քալ ու պայծառ է օրը.
 դէհ, խաչեցէ՛ք, սիրուն եղևեր,
 առագ քարէ՛ք արօրը:
 Վարը վարենէ՛ք, ահօս փորենէ՛ք,
 խոր ահօսներ հողի մէջ.
 սերմը ցանենէ՛ք, որ հունչ հնչենէ՛ք,
 ցորեն դիպենէ՛ք կալի մէջ:

Ա. ռ. ա. ծ. — Ուրբաթ օրւայ փորով է, շաբաթ օրւայ շորով է:

112. Մկան ճառը

Մի մուկ կանգնել էր ու ընկերներին համար ճառ էր ասում. —

— Ֆլան ու ֆատան,	ինքը կատաղի,
կար մի չար Մաստան. —	կախեցին գողին,
մի հսկայորդի,	կախած էլ թողին:
խատուտիկ մորթի.	կանգնել եմ փորին,
մի անխիղճ կատու,	վա՛յ սրա օրին...
մի դահիճ կատու:	Քէֆ արէք, մկներ,
Բեխերը աղի,	հա գողի մէկն էր:

113. Առաջին ամառ

Հացաբոյսերը հասկեր հունէին: Դեռ պտուղ չը կար ծառերի վրա: Եկաւ ամառը, անցաւ դաշտերով: Յորենն ու գարին, կորեկն ու հաճարը, որ տեսան նրան՝ հասկեր բռնեցին, սերմով լցւեցին:

Ժպտուն ամառը նայեց ծառերին, նայեց ու ասաւ.

— Ծառեր, պտղեցէ՛ք ու պտուղ տւէ՛ք:

Ծիրանին տւաւ կարմրաթուշ ծիրան, խնձորի ծառը՝ խնձոր մեղրածոր: Թուփն ու կեռասը, դեղձն ու խաղողը, տանձն ու սալորը, էսպէս բոլորը, ճիթ արին ծառից, ուրախ ժպտացին ամառւայ դէմքին. ժպտացին, ասին.

— Փնօք քեզ, պտղատու, առաջին ամառ:

Ուրիշ ինչ հացահատիկներ ու պտուղներ կան:

Որո՞նք են ամառւայ ամիսները:

Ա. ռ. ա. ծ. — Ամառւայ փուլը, ձմեռւայ նուլը:



114. Ա մ առ

Սաստիկ շոգ է.

ցորեն, գարի

հասել են,

հնձորները

խոտը քաղել

դիզել են:

Պտուղները

ծառի ճիւղից

ժպտալով,

ճիթ են անում

այգեպանին

յոյս տալով:

Ջան, ամառ է, ամառ է,

Արեւը խիստ կը վառէ:

Ա. ռ. ա. ծ. — Ով ամառը կը քաշի հովը՝ ձմեռը կը սատակի նրա կովը:

Ա. ս. ե. լ. ո. կ. — Գարի հաց՝ նանի թխած,

թրջի, շուռ տուր, կակղի, կուլ տուր:

115 Ցօղ

Ամառը, արևածագին, դաշտով անցնելիս՝ խոտի վրա կը տեսնես ցօղի կաթիլներ, որոնք պսպղում են մանրիկ ուլունքների պէս։ Արևի շողերի տակ նրանք գոյն են տալիս, գոյն առնում.— կարմրում են, դեղնում, կապտում...

Մախմուր կանաչի վրա նստած ցօղիկը գլորւում է, բայց չի թրջում կանաչը։ Գլորւում է ու չես նկատում թէ ինչպէս է ցած ընկնում տերևի կոթով։

Որ լեզուիդ ես առնում ցօղիկը, բերանիդ անուշ համ է տալիս։ Ռ՛վ է ցօղ տեսել։

Յօղն ինչիցն է առաջանում։



116 Մայրը

Ինչքան լաւն է ամառւայ պայծառ առաւօտը։ Ոոտ ու ծաղիկ բուրում են իրենց անուշ հոտը։ Կաքաւը դուրս է եկել իրեն ձագերով կղկղում է ու ասում.—

—Եկէք, ձագուկներս, եկէք, մըջնոց գտայ ձեզ համար։

Ձագերն եկան մօր ձէնին, հաւաքւեցին մըջնոցի շուրջը, կտցահարեցին մըջիւններին։

Մայր կաքաւը գլուխը տնկած՝ հըսկում էր, չը լինի մի փորձանք պատահի։

Յանկարծ լսեց մի ձայն... Մայրը նշան տւեց ձագերին ու ինքը թաքնւեց խոտերի մէջ։ Ձագուկները ցրւեցին, կպան գետնին։

Վտանգն անցաւ. նապաստակն էր՝ գնաց իր բանին։


—Կղակ-կա, կղակ-կա, էլ վտանգ չըկայ,—կղկղաց մայրը։ Ձագուկները նորից հաւաքւեցին։

—Ապրէք, լաւ լսեցիք ինձ, միշտ այդպէս արէք, որ վտանգից ազատէք,—ասաւ մայրը ու շարունակեց իր քշուշը։


Բ ա ո ա խ ա դ.—Այգումը ծիրան, բալէս սրտեղ է, բաղեմ տամ իրան։

117. Պատմեցէք այս պատկերի

բովանդակութիւնը



1. Տարւայ ո՞ր եղանակն է պատկերացնում այս նկարը։
2. Ո՞վքեր են սրանք եւ ո՞րտեղ են։
3. Ի՞նչ են անում եւ ո՞ւր են տանում։
4. Ինչո՞վ են տանում եւ ինչո՞ւ։



Կապրասիանը

- Յունիս, ցորեն ունիւ:

- Քնա յուլիսի Տօր:

- Յոյսս դու ես, ա՛յ յուլիս, ցորեն ունիւ:

- Յովսէփի ապէր, ինչ անի յունիսը, ինչ անի յուլիսը. ցանեալ ես ունիս, չես ցա-
նեալ չունիս: — —

Կոռաճներ. — Կոռազ մըսածի, յէրոյ խօսի:

- Իսեփին մին ասա, յիմարին հապար ու մին:

119. Սագեր



— Զո՛ւ, ջո՛ւ, շատակեր,
սե ու սիպտակ իմ սագեր,
հերիք, ինչքան լողացիք,
կարմիր տոտիկ լացիք:
Հերիք, ինչքան գետի մօտ
որդեր կերաք դուք տղմոտ.
գնանք, գնանք դէպի տուն,
Ձեզ կուտ կը տամ իրիկուն:

Բ ա ո ա խ ա դ. — Հանէս, Հանէս, եօթ գեղի ուէս,
հեծի աղւէս, գնա Թաւրէզ:



120. Արտերը

Ամառն է կիզիչ,

արտերը հասել,

հասածը հնձել,

դէզեր են դարսել:

Մեծ-մեծ դէզերը

հնձած արտերում՝

գիւղացուն նոր կեանք,

նոր յոյս են բերում:

Ու բարձած սայլը,

գիւ, գիւ, ճըլլըստուն,

շարժում է առանջ,

առանջ դէպի տուն:

էն ինչ հոռովել,

էն ինչ խաղ ու տաղ,

թնդում է դաշտը,

ճամփա, գեղ ու թաղ:

Խուրճն ինչո՞ւ են տուն կրում:

Բացի սայլերից, էլ ի՞նչով կարելի է կրել:

Հանելուկ. — Էն ինչն է՝ անհող բուսնում է,

անտերև ճիւղ արձակում:

Գնացել էինք գրօսնելու, մտանք անտառ:

Ինչքան հով էր: Ամեն կողմ ծառ, ծաղիկ, թուփ, սունկ, կանաչ... Թռչուններն ուրախ-զլարթ երգում էին:

Երկինքը չէր երևում, ծառերը գլուխ-գլխի էին տուել ու մեզ վրա բաց արել մի մեծ հովանոց:

— Տանձը, տանձը, — յանկարծ ասաւ Արշակը:

Վազեցինք քաղելու, բայց ափսոս որ խակ էր: Տանձը թողինք ու ցրւեցինք անտառում: Շուտով անտառը թնդաց մեր ձայնից:

— Տղերք, խնձոր եմ գտել, խնձոր, կանչում էր մէկը:

— Եկէք շոր տամ, շոր, — ասում էր միւսը:

— Մոշը, մոռը մոռը... եկէք, եկէք, — լսեց Արշակի ձայնը:

Բոլորս հաւաքւեցինք Արշակի մօտ: Մեր առաջ բացւած էր մի ծաղկոտ թալա, որ լիքն էր մոշի ու մոռի թփերով: Քաղեցինք, կերանք ու հետներս էլ վերցրինք տուն տանելու:

Թալի գլխին կաղնի ծառի տակ մի աղբիւր կար, շուրջը նստեցինք, հանեցինք հաց ու պանիրներս՝ կերանք, վրան էլ սառը ջուրը անուշ-անուշ խմեցինք ու պառկեցինք հանգստանալու:

Հանգստանում էինք, մէկ էլ մի թրըմփոց լսեց ու Արշակը ճչաց:

— Վայ, վայ, օգնէցէք, ինձ կերաւ:

Սարսափած վեր թռանք տեղներիցս ու ինչ տեսնենք՝ մի սկիւռ ծառն է բարձրանում: Դու մի ասի, սկիւռը ծառի ճիւղից ընկել էր Արշակի վրա: Ծիծաղն ընկաւ մեր մէջ: Արամը թէ՛

— Արշակ, Արշակ, մի քիչ ջուր խմիր, վախեցած կըլինես:

— Ինչո՞ւ պիտի վախեցած լինի, սկիւռը կաղին էր բերել Արշակի համար, — ասաւ Գրիգորը:

էսպէս ծիծաղելով ճամփա ընկանք դէպի տուն: Մի քիչ որ գընացինք, մէկ էլ տեսանք մի ողնի, փշերը ցցած, քիթը հանած մեզ է նայում: Հէնց որ մօտեցանք, կծկւեց, չէիր իմանում գլուխը որտեղ է, ոտները որտեղ: Արշակն ուզեց ոտով խփել, գլորել, Արամը չը թողեց, — ասաւ:

— Մեղը է, թող իրան համար ապրի, ի՞նչ ես ուզում:

Դեռ խօսքը բերանում, մէկ էլ յանկարծ մի թփի տակից դուրս թռաւ նապաստակը ու փախաւ:

— Բռնեցէք, բռնեցէք, ձէն տւինք մենք, բայց նապաստակն արդէն կորել էր:

— Ինչքան բան կայ անտառում, — ասաւ Գրիգորը:

— Մենակ սրանք ե՞ն, բա գայլը, աքլը, աղւէսը, ո՞ր մէկն ասեմ, — ասաւ Արամը:

— Տղերք, մութն ընկաւ, շուտ-շուտ գնանք, — ասաւ Արշակը:

Ու մենք շտապեցինք դէպի գիւղը:

Ի՞նչ օգուտ է տալիս անտառը:

Ի՞նչ կենդանիներ, թռչուններ ու քոյսեր կան անտառում:

Ա. ո. ա. ծ. — Ահը շատ է, քան թէ մահը:



122. Թռա՛ւ...

Երկու սիրուն ծիծեռնակ՝

մէկը մէրիկ, մէկը ձագ,

նստած էին բնի մէջ՝

զանգակատան սիւնի տակ:

— Է՛յ անուշիկ, — մայրն ասաւ,

իմ ծըլւըլան, սիրուն ձագ,

հիմա հերթը քեզ հասաւ,

թռիր գնանք համարձակ:

Ու ձագուկը սիրտ առաւ՝

մօր ետևից դուրս թռաւ,

կտրից — կտուր, ծառից՝ — ծառ

թռաւ-անցաւ սարէ սար:



Մշի՛ր հովիկ

Մշի՛ր, հովիկ, հով արա,
հանդ ու հովիւր ցով արա,
հաճար, ցորեն հորանց ցար,
կոհակ-կոհակ ծով արա:



Պորը՝ հոր է, գրիոր է,
հորս փորսած գրիորը՝
էդ հորիցը շար խոր է:

124. Ամենից շար

—Է՛յ դուք մըջիւններ, ինչ անդադարն էք:
Մի ըռպէն ինչ է, չէք հանգստանում. ինչ էք
իրար անցել, ինչ էք վազվզում, էդ ինչ էք
անում:

—Մենք աշխատում ենք,—ուրախ-ուրախ
պատասխանեցին մըջիւնները:—Գիտե՞ս, թիթեռ,
ինչ լաւ բան է աշխատանքը:

—Օ՛ֆ, սրանք էլ... աշխատանք, աշխատանք,
զուլ տարան էլի... կարծես աշխարհում աշխա-
տանքից էլ լաւ բան չը կայ: Ես էլ կասեմ, որ
ծաղկից-ծաղիկ թռչկոտալն է ամենից լաւը...
Յօդ խմելն ու արեւի տակ քնելն է
ամենից լաւը:

Ասաւ թիթեռը, բացեց թևերն ու
թռաւ...



125. Օձն ու արագիլը

Ամառ էր: Նախրապան Սարօն նկատեց, որ մի թփից դուրս սո-
ղաց մի ահագին սև օձ ու խոժոռած դէմքով սկսեց նրան նայել:

Զարհուրած Սարօն սկսեց փախչել, իսկ օձն ընկաւ ետևից: Սար-
սափելի էր...

Հասնելով գետակին, Սարօն ինքն էլ չիմացաւ թէ ինչպէս
անցաւ միւս ափը... Օձի սուլոցը այլ ևս չէր լսոււմ: Սարօն ետ
նայեց. օձը չը կար, բայց գետակի միւս ափին մի թռչուն կարծես
կուռում էր մի ինչ որ բանի հետ:

Դա մի արագիլ էր: Նա կուռում էր մի սև օձի հետ, ճիշտ այն
օձի հետ, որ քիչ առաջ իր յետևից էր ընկել:

Արագիլը յանկարծ վրա թռաւ, բռնեց օձի պոչից ու վեր սլա-
ցաւ: Երբ բաւականին բարձրացել էր, յանկարծ թողեց օձի պոչը.
օձն ընկաւ գետափի ապառաժներից մէկի վրա և անշարժ մնաց
տեղը: Սատկել էր: Արագիլը շտապով ցած իջաւ. կրկին բռնեց պո-
չից ու ծածկեց մօտակայ բլուրի ետևում:

Սարօն ազատ շունչ քաշեց, բայց և այնպէս չը վստահացաւ
անցնել գետակը:

Ռ՛քտեղ է օձ շատ լինում: Ուրիշ ինչ սողուն զիտէք օձի նման:
Շ ու տ ա ս ե լ ու կ.—Կարճ պոչ փոցիս, կարճ պոչ փոցիս:



126. Ճակձի մահը

Սևիկ-մևիկ,
քնքուշ թևիկ,
չարածձի մի ճանձ է,
որ կողմն ասես,
խելառի պէս
առանց յոգնել կը թռչէ.
հա՛ քրչի՛ դու,
հա՛ թևով տու,
ասա՛ իսկի կամաչէ՞:



Զմռան դէմը
տըզտըզում է,—
տը՛զ, տը՛զ, տը՛զ...
Տըզտըզում է,
խի՛ստ մըսում,
մոլորում է, օրօրում,
օրօրում է,
կըլորում է,
շունչը փրչում՝ գըլորում...

Ա ո ա ծ.—Ամենին ծով է, ինձ համար՝ սով է:

127. Ռէս Օհանիւն

Հացը գեղից,
միսը գեղից,
եղը գեղից,
ձուն էլ գեղից.

Ղուրը տանից...
Ռէս Օհան,
քո տունը շէն,
քո տունը շէն...



128. Արմիկն ու կոլոտը

—Դէ, կոլոտ ջան, ուղիղ կանգնիր, չէ՞ որ դու պահապան ես, տեղիցդ չը շարժուես,—ասում էր Արմիկը իր պստիկ շանը:

Կոլոտը լսեց և սուս ու փուս ձգեց կանգնեց ետեւի թաթերի վրա: Բայց հէնց այդ րոպէին խոհարարը ձայն տւաւ.

—Կոլոտ, Կոլոտ, էդ ո՞ւր ես կորել:

Կոլոտը իսկոյն իմացաւ, որ համեղ մսի կտորներ է տալու խորհարարը, տեղից դուրս պրծաւ ու վազէվազ գնաց խոհանոց:

Արմիկը զայրացաւ, վազեց, որ բռնի, յանկարծ լսեց տատիկի ձայնը.

—Արմիկ, Արմիկ, ո՞ւր ես, արի՛ քեզ համար միրգ եմ բերել:

Արմիկն ամեն բան մոռացած՝ գլխապատառ վազեց տատիկի մօտ:

Մի փոքր յետոյ՝ Արմիկն ու Կոլոտը դարձեալ իրար հետ էին: Արմիկն սկսեց յանդիմանել Կոլոտին.—

—Հաւ պահապան ես, հա՛... մսի անունը տւին թէ չէ՛ իսկոյն ամեն բան մոռացար ու փախար... Ամօթ քեզ:

Իսկ Կոլոտը պոչը թափ էր տալիս և հաջում.—

—Ես բաղցից մոռացայ ամեն ինչ, գործս թողի ու փախայ: Այ, քեզ ամօթ, որ մի հատ մրգի համար՝ ամեն բան մոռացար ու գլխապատառ վազեցիր տատի մօտ:

Նրկուսից ո՞վ էր մեղաւոր:



Ուռենի



Աիրո՞ւն ուռենի,
Կանաչ ուռենի,
Փւղերդ կախ-կախ,
Ինչո՞ւ չես ուրախ:

Աիրո՞ւն է վառել,
սիրտդ ծարաւել,
որ էդքան զաւեյ
գլխիկդ ես ծռել:
Գլխիկդ ես ծռել,
վշտոյ ես դառել,
ծնկիդ ես խփում,
արցունք ես թափում:

Ա. ու ծ.—Բարդի ծառը կերթայ, կը գայ՝ քէֆի տէր է,
ուռի ծառը կերթայ, կը գայ՝ դարդի տէր է.



130. Ալագեազը

Ալագեազը
աստղերի մէջ
աղամանդէ
թազը գլխին,
սարերից վեր,
ամպերից վեր,
թիկն է տւել
զմրուխտ գահին:

Աստղի ցոլքով
գիշերն իջաւ,
թո՛ղ տուր, բալաս,
արօրը.
Ալագեազը
խոր բուն մտաւ,
հօտը իջաւ
մութ ձորը:

131. Ընկուզենու ծննունդը

ա.

Մի օր ծառից մի ընկույզ ընկաւ. մի սկիւռ յարձակեց ընկույզի վրա և փախցրեց:

Ընկույզը շատ վախեցաւ, նա իրեն կորած էր համարում... Մին էլ լսեց՝ հաֆ, հաֆ, հաֆ... Հաջողը մի մեծ շուն էր: Սկիւռը վախեցաւ, թողեց ընկույզն ու փախաւ դէպի անտառ:

Ընկույզը ընկած մնաց դաշտի խոտերի մէջ: Ձմեռը ձիւնն եկաւ ծածկեց նրան, ամբողջ ձմեռը քնած մնաց սիւպտակ վերմակի տակ:

Հետեւեալ գարնան նա բնից զարթնեց. արձակեց իրենից մի արմատ, ինչպիսին արձակում են բոլոր բոյսերը: Արմատը մտաւ հողի մէջ և սկսեց ծծել գետնի շուրն ու հիւթերը: Ամբողջ օրերով նա այնտեղ ան էր քաշում.—

— Ախ, թէ կարողանայի դուրս գալ գետնի տակից, մտածում էր նա: Ո՛րչափ գեղեցիկ է այնտեղ, վերևում: Գուցէ այնտեղ բաւեկամներ գտնեմ:

Բայց նա համբերող էր և քաջ, ինչպէս բոլոր ընկուզենիները: Կամաց-կամաց նա սկսեց գլխով հրել դէպի վեր, որ բարձրացնի իր բանտի կտուրը ու մի օր էլ դուրս եկաւ իր բանտից:

բ.

Փոքրիկ ընկուզենին արդէն դուրսն է: Ի՞նչպէս գոռոզաբար օրօրում է իր գեղեցիկ ցօղունը, թիթեռը թռչում է նրա շուրջը: Անուշահոտ մանուշակը ողջունում է նրան: Մորեխը մաղթում է նրան բարի գալուստ: Մի խխունջ միայն նրան քիթ է ցոյց տալիս: Իրիկնապահին մի թրթուր հեռուից նկատեց ընկուզենու կանաչ տերեւիկները:

— Այ, իմ ընթրիքը գտայ,—ասաւ նա,—այս մատաղ ցօղունը շատ համեղ է: Ասաւ ու մագլցեց, վեր բարձրացաւ դողդոջուն ցօղունի վրայով ու կրծեց նրա մի տերեւի կողքը:

Բայց յանկարծ փոքրիկ ընկուզենին զգաց իր գլխին մի ուժեղ հարւած: Նա շճեց մնաց: Երբ նորից ուշքի եկաւ, տեսաւ որ մի ծիծեռնակ թրթուրը կտցին թռչում է:

— Շնորհակալ եմ, բարի ծիծեռնակ,—բացականչեց կաղնին,—դու չը լինէիր, ես կորած էի: Թրթուրը կուտէր իմ տերեւները և ես կը չորանայի:

Ի՞նչպէս են բազմանում անտառի ծառերը:

Ի՞նչպէս է լինում, որ հանդերում յաճախ պտղատու

ծառեր են պատահում:

132. Պարծենկոտ էծը

ա.



Նազար ապօր

էծը մի օր

կանգնեց քարին սիրտն ուրախ,

կուշտ-կուշտ կերած,

փորը ուռած,

կանչեց էսպէս երգ ու տաղ...

—Մէքէքէ... մէքէքէ...

Ես Նազարի էծն եմ,

մէքէքէ... մէքէքէ...

Ես էս սարի մեծն եմ:

Մըկըկըկա՛մ... մըկըկըկա՛մ...

էն ի՞նչ գէլ է, էն ի՞նչ արջ,

որ սիրտ կանի ու դուրս կը գայ

էս քարերում իմ առաջ:

Ուքիս տակը՝ ձորն է անտակ,

գլխիս վերև՝ ամպերը,

ես եմ, որ կամ էստեղ մենակ,

ինձ հետ և իմ ըստերը:

էս լանջերին արածել են

իմ քաջ, կտրիճ պապերը,

ինձ պէս անվախ բարձրացել են

էս ձորերի ափերը:

Մըկըկըկա՛մ... մըկըկըկա՛մ...

Ես Նազարի էծն եմ,

մըկըկըկա՛մ... մըկըկըկա՛մ...

Ես սարերի մեծն եմ...

բ.


Մէկ էլ՝ ըհը... մի նապաստակ

թփի տակից դուրս պրծաւ,

ընկաւ էծի ոտներէ տակ,
էծը վախից ծուլ էլաւ...
ծուլ-ծուլ էլաւ, գըլոր-մըլոր,
գնաց ընկաւ ձորը խոր:

—Մըկըկըկա՛մ... մըկըկըկա՛մ...
էս ո՛ւր ընկայ, ո՛ւր ընկայ.
մըկըկըկա՛մ... մըկըկըկա՛մ...
պողկէ չը կայ, ոտ չը կայ...

—Մէէէէ՛... մէէէէ՛...
Նազար ապօր էծն ըլեմ.
մէէէէ՛... մէէէէ՛...
էս ձորերի մէջն ըլեմ...



Օրւան մէկը մի ախլոր
խուզ-ձուզ անելիս՝
յեւսաւ մի կայր Տարգարիսը
աղբի միգին փայլելիս:
Կրցեց, աւաւ. «էս ինչ է.
ինչ կարցնես, ոչինչ է:
Ահ Վայր քամ էն Տարդին,
որ գին կրցայ Տարգարիսին.
խսկ ինչ կամար մի գարին
արժէր էսպէս կայարին»:

134. Քաղաքացի Վաչիկը

ա.

Գալուստը սայլը պատրաստեց, եզները լծեց, որ գնայ խոտի:
—Վաչիկ, Վաչիկ, արի նստի գնանք, ասաւ Գալուստն իր եղբօր
որդուն, որ քաղաքից հիւր էր եկել:
Վաչիկը նստեց: Գնացին:
Ճամփին Վաչիկը հարցեր էր տալիս թէ՛ էս ի՞նչ է, էն ի՞նչ է:
—Մի ծառի մօտից անցնելիս՝ Վաչիկն ասաւ.
—Հօրեղբայր, էս ի՞նչ ծառ է:
—Հացի ծառ է, Վաչիկ:
—Բա ինչո՞ւ վրան հաց չը կայ:
Հացը քաղել են, ծիծաղեց Գալուստը:
Քիչ էլ գնացին. տեսան մի հովիւ եափունջին ուսերին, մահակը
ձեռին կանգնած:
—Էն ո՞վ է հօրեղբայր:
—Հովիւ է, ծառից հաց քաղողն է:
—Բա չի շոքո՞ւմ, ինչո՞ւ ամառուայ շոր չի հագնու՞մ:
—Դերձակի մօտ է, դեռ չեն բերել, նորից ծիծաղեց Գալուստը:
Հասան խոտատեղ. Վաչիկը թէ՛
—Հօրեղբայր, ծարաւ եմ:
—Ա՛յ աղբիւրը, խմիր, բալիկս:
—Բաժակ չը կայ, ինչո՞ւ խմեմ:
—Էս ջուրը, Վաչիկ ջան, բաժակով չեն խմու՞մ, ա՛յ էսպէս են
խմու՞մ,—ասաւ Գալուստը ու շոքեց, աղբիւրից մի կուշտ ջուր խմեց:

բ.

Տանը Վաչիկն ասաւ մօրը.
—Մայրիկ, ես քեզ համար հաց պէտք է բերէի, բայց քաղել
էին ծառիցը:
—Ո՞վ էր քաղել, Վաչիկ ջան:
—Ա՛յ, էն հովիւը:

—Քեզ ո՞վ ասաւ:

—Հօրեղբայրս:

—Վաչիկ ջան, նա հանաք է արել, հացը ցորենիցն է լինում, ցորենը ցանում են, հնձում են, կասում են, աղում են, ալիւր են շինում, ալիւրը շաղախում են խմոր հունցում ու հաց թխում:

—Բա հովիւը ի՞նչ է անում այնտեղ:

—Ոչխար է արածեցնում, որ կաթ կթի, պանիր շինի:

—Գիտե՞ս մայրիկ, հօրեղբայրը առանց բաժակի ջուր խմեց:

—Ես հօ քաղաքացի Վաչիկը չեմ, որ ջուրը գնամ, ծարաւ գամ, ծիծաղեց հօրեղբայրն ու պաշեց փոքրիկ Վաչիկին:

Ինչո՞ւ Վաչիկը այդպիսի հարցեր էր տալիս:

Դիւղացի սրեխան այդպիսի հարցեր կը տան:

Ա. ռ. ա. ծ. — Զիմանալն ամօթ չէ, չը հարցնելն է ամօթ:



135. Անօրեւ

Սեակնած ամպը
դէմքը խոժոռեց,
մտքի մէջ ընկաւ,
տարածւեց, փուլեց:

Փուլեց, լայնացաւ
ու մէկ էլ՝ տրաք...
որոտաց, թափեց
կրծքից հուր-կրակ:

Ու պտուղ-պտուղ
կանգնեց արտասուեց,
արցունքն անձրևի
շեթերով կախեց:

Ե՞րբ է յորդ անձրեւ գալիս:

Ո՞ր է գնում անձրևի ջուրը:

Ա. ռ. ա. ծ. — Գդալ, գդալ ժողովեցի, շերեփ, շերեփ ցրւեցի:

Հանելուկ. — Էն ի՞նչն է. — կարճ տէրտէր՝ երկար փիլոն:



Խորամանկ ծիպը

Կայրուն մի ծիպ բռնեց, որ անուշ անի:

— Քեռի փրսօ, ասաւ ծիպը, լսել եմ որ կայրունները մախրաւէր են, առանց լալցելու բան չեն ուրում, փիշը է:

— Փիշը է, ես էլ պիտի լալցեմ, որ յետոյ ուրեմ, — ասաւ կայրուն, — ծիպին վայր դրեց ու սկսեց լալցել: Ծիպին էլ էդ էր ուրում. թուաւ նստեց ծառին:

— Լաւ, ա՛յ ծիպ, — ասաւ կայրուն, — էդ ինչ խրապ, այսուհետեւ առաջ կուրեմ, յետոյ կլլալցեմ:



136. Ի՞նչ անուշ...

Առանեակն ելաւ ամպն իվեր,
գիշերն ամպշող, ի՞նչ անուշ.
հովը եկաւ տարուբեր,
ընկշնկալով ի՞նչ անուշ:

Շւին հեռուն հառաչեց,
զանգատ արաւ, ի՞նչ անուշ,
հովը հանգիստ ինձ բերեց
քըշփըշալով ի՞նչ անուշ:

Ա. ռ. ա. ծ. — Յորեն որ չունիս՝ ցորենի լեզու ունեցի:



138. Հսկայ Մըջիւնը

ա.

Դաշտում մի հողակոյտ կայ, դա մի ահագին տուն է մի քանի յարկանի, շինել են միջատներն իրենց համար: Ունի դահլիճներ, ննջարաններ, ամբարներ, դա մըջնոցն է:

Մըջնոցում կան բանւոր մըջիւններ, որ տուն են շինում, երեսաներին պահում: Կան զինւոր մըջիւններ, որ մըջնոցը պաշտպանում են թշնամիներից: Մըջնոցի թագուհին է մայր մըջիւնը, որ ուտում-խմում է ու միայն ձու ածում մեծ դահլիճում:

Ձւերից դուրս են գալիս որդեր: Որդերը մեծանում են, իրենց համար բլիշ են շինում ու մտնում են մէջը: Բանւոր մըջիւնները նրանց մասն են ածում արևի տակ, մինչև որ գալիս է ժամանակը և նրանք մըջիւններ են դառնում: Այդ մըջիւններին բանւորները հանում են բլիշներից լոյս աշխարհ:



Ամառը մըջիւնները հաւաքում են իրենց տարւայ պաշարը և լցնում ամբարները: Նրանք մինչև անգամ կովեր էլ ունեն, որոնց կթում են կովերի նման: Այդ կովերը կանաչ միջատներ են, որ ապրում են տերևների վրա: Մըջիւնները թաթերով շփում են նրանց մէջքը և նրանցից քաղցր հիւթ է դուրս գալիս, որ մըջիւնները շատ են սիրում: Մըջիւններն այդ միջատներին երբեք չեն փաստում:

Ահա այդ մըջնոցում ծնւեց ու մեծացաւ Հսկայ Մըջիւնը:

բ.

—Ինչո՞ւ ես տխուր, Կրծան, հարցրեց մայր մըջիւնը մի օր:

—Ինչի վրա ուրախանամ, մայրիկ, տես. մերոնցից ինչքան փչացան: Անտէր մնացած անձրևը... եկաւ մեր քաղաքը հեղեղեց, տուն ու տեղ բոլոր տարաւ: Էդ քիչ էր, թևաւոր հրէշներն էլ մի կողմից են մեզ փսաս տալիս:

Կրծանը խօսքը դեռ չէր վերջացրել, յանկարծ ծառի ճիւղից լսեց սոխակի քաղցր ձայնը:

—Ճիշտ ես ասում, Կրծան ջան, պատասխանեց մայր մըջիւնը, անիծածը, տես ինչպէս է կրկնւում: դա այն աւագակ սոխակն է, որի վրա այնքան երգեր են յօրինել:

Այդ միջոցին մըջնոցի մշակները բանդւած տներից դուրս էին բերում բոժոժներ, ձւեր, հատիկներ, որ արևի տակ չորացնեն:

Սոխակը տեսաւ ծառի ճիւղից, վեր եկաւ ու սկսեց ուտել սերմերը: Սկամորթ մշակները յարձակեցին իրենց տէրերի պաշարն ազատելու, բայց սոխակն ամեն մի հարւածով տասը մըջիւն էր գլորում:

—Տղերք, ինձ հետևեցէք,—ասաւ Կրծանը ու յարձակեց աւագակ սոխակի վրա: Իսկոյն ընկերները բարձրացան սոխակի ոտների վրայով, շուլալեցին մարմինն ու կծոտեցին նրան:

Վիրաւորւած սոխակը նետի պէս երկինք սլացաւ:

—Տղերք, հիմի պոկ եկէք,—ասաւ Կրծանն ու ահագին բարձրութիւնից իրեն ցած գցեց: Ցած ընկան և միւսներն ու անփսաս հասան իրենց մըջնոցը:

—Կեցցէ, մեր քաջ Կրծանը, մեր Հսկայ Մըջիւնը,—կանչեց մայրը, կանչեց ամբողջ քաղաքը:

Ո՞վ է մըջնոց տեսել եւ հրտել:

Ո՞վ է դիտել մըջիւնների աշխատանքը եւ ինչ է տեսել:

Ա. Լ. Ե. Դ.—Մըջիւնը պատիկ է, բայց առիւծի ականջ է մտնում:



139. Դարբին



—Թա-կլի-թա,

թա-կլի-թա...

Երկաթ է կռփում դարբինը սալին,

նրա կոները՝ ջլոտ, մսալի,

գործում են արագ

ծանր մուրճի տակ:—

—Թա-կլի, թա-կլի

թա-կլի-թա...

Դարբին, խփիր կռանը,

կայծեր թափիր երկաթից,

հւժ տուր քո աջ կռանը,

էր-իւր, խոր-իւր կրակից,

—Կլի-թա, կլի-թա,

թա-կլի-թա...

Երկաթ է կոփում դարբինը սալին,
ու զրտինը-մտած, էն յոգնած հալին՝
համ երգ է երգում,
համ երկաթ թակում:

Ի՞նչ են շինում դարբինները երկաթից:
Երկաթը հրտեղից է ստացում:

Հանելուկ.—Էն ի՞նչն է. կամը երկաթ, կար կաշի,
կամաց-կամաց տուր զշի:



140. Կաղնին ու կոցահարը

Կաղնին թափել էր տերևներն ու օրօրում էր մերկ կատարը:
Մէկ էլ՝ մի տրաքոց...

—Թո՛ւմ-բո՛ւմ, թո՛ւմ-բո՛ւմ...

Դա որսորդի հրացանի ձայնն էր:

Հէնց այդ ժամանակ լսեց մի դողդոջիւն ձայն: Դա մի կըտ-
ցահար էր, որ սաստիկ վախեցել էր:

—Կորած եմ, կորած եմ, ո՛ւր գնամ, ո՛րտեղ թաքնւեմ, լալիս էր նա:

—Սիրուն կոցահար, շուտով մտիր իմ խոռոչը,—ասաւ կաղնին:

Կոցահարը իսկոյն բարձրացաւ ծառը, չորս կողմը ոլոր-մոլոր
պտոյտներ արաւ ու թաքնւեց խոռոչի մէջ և որսորդի ու նրա շան
ձեռքից ազատւեց:

—Կաղնի պապի՛, —ասաւ կոցահարը,—դու իմ կեանքը փրկե-
ցիր, ես ինչպէս բո լաւութեան տակից դուրս գամ:

Ասաւ ու դուրս եկաւ խոռոչից: Դուրս եկաւ ու տեսաւ որ մի-
ջատներն ու որդերը կրծել են կաղնու բունը: Նա սկսեց իր աշխա-
տանքը:

Առաւօտից մինչև երեկոյ լսում է նրա կոցի կտկտոցը.—
կոցով խփում էր ծառի կեղևին և տակից դուրս հանում միջատ-
ներն ու որդերը:

Միջատներն ուղում էին փախչել, բայց կոցահարը բռնում էր
նրանց ու անուշ անում:

Այդպէս շարունակ կոցահարը չէր հեռանում իր բարեկամ կաղ-
նուց ու նրանք երկուսով շարունակ խօսում էին իրենց անցած
օրերից:

Ասայի օրհնութիւնը

Ասայը չեւիք դրեց թոռների գլխին և օրհ-
նեց նրանց.— Բայիկներս, Ասպժու անհայր-
նում օրհնութիւնը լինի չեղ վրա, միշտ էդ-
պէս սիրով լինէ՛ք: Իւեղփին պահապան լինէ՛ք,
անձարին պաշտպան: Ուր որ դու՛ք գնա՛ք՝
խարը կանաչի, աւայը ջուր փայ:

Երեխաներն ուրախացան ու թուրպապին:

142. Ուրազ - ուրազի*)

(Խ ա ղ)

—Ուրա՛զ, ուրա՛զ,
ձեռնաուրազ,
գլուխդ կոպալ,
դունչդ բարակ,—
ինչքան տաշես,
քեզ կը մաշես,
թէկուզ աշխարհ
ողջ քեզ քաշես:
Համ ճղկում ես,
ճղկ-ճղկում ես,
սուր բերանով
լաւ յղկում ես,
համ զըրբխում,
համ թըրբխում,

կոպալ գլխով
մեխ ես թակում:
Թակի, թակի,
ամուր թակի,
մեխն ի՞նչ է որ
հակառակի:
—Եկէ՛ք, թակենք,
պինդ-պինդ թակենք.—
թըրաք-թըրո՛ւք,
թըրաք-թըրո՛ւք,
մեխն իր գլխով
ոտնատակենք —
Չըրախկ-չըրո՛ւխկ,
չըրախկ-չըրո՛ւխկ:

*) Այս խաղը խաղում են նոր շինած տների կտուրներին, երբ ած-
լած հողը հարկաւոր է տրորել. խաղում են այսպէս.— Երեխաները կանգնում
են իրար ետև, մէկ-մէկու փեշից բռնում և ծուլ-ծուլ լինելով շուտ-շուտ կրկնում:

143. Աշխատասեր բանուոր

Արևը մայր մտնելու վրա էր:

— Նայիր, Թովիկի,—ասաւ խլէզը գորտին,—այ քո բեռու տղէն գալիս է, ի՞նչ է նրա անունը...

— Դոգօշ,—պատասխանեց Թովիկին ու մօտեցաւ Դոգօշին:

— Էս ո՞ւր ես շտապում, այ տղայ, արի գնանք մի քիչ զրոյց անենք, իմ հիւրի հետ էլ ծանօթացի:

— Ափսոս որ ժամանակ չունեմ, Թովիկի ջան, բանջարանոց եմ գնում կաղամբներին նայելու,—ասաւ ու գնաց:

— Ի՞նչ անբաղաճաճարին էր քո բեռու տղէն, լաւ է, որ մի բանի նման էլ չէ, տգեղ, անշնորհք, դանդաղ... իսկ որ Դոգօշ, նկատեց խլէզը: Ափսոս չէ՞ս դու... սիրուն ես ու գեղեցիկ, շապիկդ կանաչ է ու փայլուն. իսկ նրա մարմինը ծածկւած է տգեղ բշտիկներով:

— Ճիշտ ես ասում, խլէզ, բայց նա մեղաւոր չէ, որ տգեղ է: Մէկի արժանիքը արտաքինով չը պէտք է չափել: Դոգօշը մի աշխատասէր բանուոր է, որ ամբողջ կեանքը օգուտ տալով է անցկացնում: Նա ոչնչացնում է բանջարանոցի բոյսերի միջատներին: Դրա համար էլ շատ եմ սիրում Դոգօշին:

— Որ էդպէս է, Թովիկի, ես էլ կը սիրեմ նրան, բարի. գիշեր, արդէն ուշ է, մայրիկս ինձ սպասում է,—ասաւ խլէզն ու պոչը շարժելով վազեց դէպի տուն:

Ա. ո. ա. ծ.— Ձի խաղում կարմրաշորիկը, խաղ է անում կշտափորիկը:

144. Գորտը

Լքուն,

փքուն,

գորտը կըռռան,

ջրհորումը,

ջրի վրան,

իւր չորս կողմը

աչք ածելով,

ասաւ.— Կասեն

մեծ է ծովը...

մի թիզ չը կայ

իմ թզովը...

զորթ, զորթ, զորթ...

Հանելուկ.— Էն ի՞նչն է,—բռնեմ՝ բռնովս մին, թողնեմ՝ տնովս մին:

144. Պատմեցէք այս պատկերի բովանդակութիւնը



1. Ո՞վ է ումը կերակրում եւ ի՞նչ է տալիս ուտելու:
2. Ի՞նչ թռչուն է փակւած վանդակի մէջ եւ ի՞նչու են պահում նրան:
3. Տան պատից ի՞նչ է կախած:
4. Ո՞վ է իմանում նրա ազգանունը:

145. Ո՞վ էր խելօքը...

Խօխօն ու Խոտպատը ճամփա էին գնում: Խօխօն էլ էր աղքատ, Խոտպատն էլ: Խօխօն աչքերը վեր է տնկում ու ասում.—

—Աստուած, աղքատի Աստուած, ինչ կը լինի մի հազար էծ ու ոչխար ուղարկես ինձ:

—Աստուած որ տայ, ինձ էլ բաժին կը հանե՞ս, Խօխօ, հարցնում է Խոտպատը:

—Ի՞նչ ես ասում, Խոտպատ, չը գիտե՞ս, որ ընտանիքս մեծ է, ուտողս շատ,—պատասխանում է Խօխօն:

—Որ էդպէս է,—ասում է Խոտպատը,—Տէ՛ր Աստուած, ինձ էլ քառասուն գէլ ուղարկի, որ մի գիշերւայ մէջ կոտորեմ Խօխօի էծն ու ոչխարը:

—էդ ի՞նչ ես ասում, Խոտպատ:

—Շատ լաւ եմ անում, Խօխօ:

—Լաւը գլխիդ կպչի, դու ինչո՞ւ իմ էծն ու ոչխարը կը կոտորես որ...

—Շատ էլ լաւ կանեմ... ապա կաթն ու մածոնը մենակ կուտե՞ս...

—էսպէս Խօխօն ու Խոտպատն իրար առան, բանը հասաւ տուր ու դմբոցի, էլ բիթ-բերան չը թողին... Ու էսպէս իրար կը ջարդէին, թէ որ նրանց մի ուրիշ ձիաւոր չը պատահէր:

էդ ձիաւորը տկերով գինի էր տանում, մօտեցաւ կռուողներին ու հարցրեց.

—Ի՞նչ է պատահել ձեզ, ի՞նչ ունէք բաժանելու, ինչո՞ւ էք էտպէս իրար ջարդում:

—Բա չես ասի, ձիաւոր արպէր, էսպէս որ, էսպէս... Խօխօն ու Խոտպատը բարկացած պատմեցին իրենց կռուելու պատճառը:

Ձիաւորը խիստ չարացաւ, հանեց դանակը գրպանից, խրեց գինու տկի մէջ ու ճչաց.

—Թող Աստուած իմ արիւնն էլ էսպէս թափի, թէ դուք մի պուտ խելը ունէք:

Ով է՞ր խելօքը...

Շուտասելուկ.—Ձիթի տիկ, ծակ-ծակ տկճոր:

Առ ա ծ.—Դերձակին ասին.—Քոչիր, ասեղը խրեց թևին ու գնաց:

Վար անելը

Ձիւնը հալեց, դալար բայեց: Գիւղացին էդ-գունէլ լծեց, գնաց իր հողը վարելու:



Գութանը լարեց, սև հողը վարեց, սև սկօս շարժեց: Մաճկալը մաճին, յետը սկանգին, հօքաղը լծին, փայտը յետին հօքովէլ հծ...

147. Առնարոնուկի

(Խաղերգ)

—Ճոպան, ճոպան,
կաշի ճոպան,
իշի ճոպան,
գոմշի, ճոպան:
Ձիգ տու, քաշի,
էլ մի աշի,
որտեղ մաշի,
էն տեղ՝ ճը՛րթ...
—Եզան տէր էք՝

եզը բերէք,
գոմշի տէր էք՝
գոմէշ բերէք:
Բերէք մորթենք,
կաշին քերթենք,
կաշին քերթենք,
ձող-ձողատենք:
Չող-ձողատենք,
ճըղ-ճղատենք,

մի հատ թազա
ճոպան անենք:
—Բախշի, բախշի,
այ պարբաշի,
եզ է, էշ է,
թէ գոմէշ է,
քեզ փեշքէշ է...
Վայ ես մեղայ,
հազար մեղայ...

*) Երեխաները բռնում են մէկ-մէկու ձեռքից և երկար ճոպանի (կաշից-հիւսած պարան) նման ձգում: Չգում են ու երգով ասում այդ խաղերգը, ձիգ տալիս որ երեխան թոյլ է լինում կռնարոնուկը բաց է թողնում և՛ ճը՛րթ... կտրում է: կտրողին մնացածները շրջապատում են ու երգում՝ «Եզան տէր էք...»: Էնքան երգում են, մինչև որ կտրողը ներողութիւն է խնդրում ասելով՝ «Բախշի, բախշի»...



ա.

Մի օր արջը	կլոր-զլոր,
լնգին-լնգին,	իմ բալիկներ:
կոպալ գունչը	Ո՞ւր էք, ո՞ւր էք,
ծնկին-ծնկին,	էրւած սրտիս,
ճամփէն ոլոր,	ծարաւ սրտիս
սիրտը մոլոր,	մի պուտ ջուր էք:
արտասուում էր	ինչո՞ւ էսպէս
մաղիկ-մաղիկ,	սխալւեցի,
կարատում էր	չար աղւէսի
սիրտ ու աղիք:	հետ ճամփեցի
—Ա՛խ իմ ձագեր,	էն քանդւած
բոթ-բոթոթիկ,	բողազավանք *),
բոտ-բոտոտիկ	էլ ո՞ւր անոց
շէկիկ-մէկիկ	«գնանք ու գանք»:

*) Բողազավանք ասում են ուտելուն, պատառ-պատառ անելուն:



բ.

Արջը չեկած	փափկամազիկ
ճամփի կէսը,	ես աղւէսն եմ
ձէնը առաւ	սարի շրջիկ,
գող աղւէսը:	պոչս փնջիկ:
Պզզաց, վզզաց,	Իմ ձեռքին է
սար, ձոր անցաւ	ողջ աշխարհքը,
մի ուռնու	էլ ո՞վ ունի
հա մօտեցաւ:	էս իմ խելքը:
Ուռը քաղեց	Գիտեմ սողալ,
ուռի ծառից,	մտնել, լողալ,
կողով գործեց	եղնել դողալ...
քաղած ուռից,	Իմն է սար, ձոր,
ու սկսեց	անտառ ու հանդ,
իրա երգը.—	հազար հնարք,
—Նազիկ-նուզիկ	հազար ֆանդ...

գ.

Մին էլ՝ պուպոստ...	Երկու աչքով
արջը չուտ-չուտ,	հաստատ կոյր ես...
Թէ՛—Ձագերս,	Պապական մենք՝
այ չար աղւէս:	ան ու դողով
—Կոպիտ, անտաշ:	կողովագործ
բռի, թերմաշ,	վարպետներ ենք
զո՛ւր ես—մո՛ւր ես...	ամբողջ ցեղով:

Արի ըստի
մի քիչ նստի,
քիչ հանդարտի,
քեզ մի ջարդի,
մինչև որ ես
գործս աւարտեմ,
պոչս փարտեմ,
դէս-դէն մտնեմ,
քո ձագերի
տեղը գտնեմ:
Վայ, վայ, արջի
ձագը կորչի՞...
Ինձ, աղէսիս,
բա ամօթ չի՞...

Դ.

Արջը նստեց արջավարի,
ուստա աղէսն ուստավարի
արջի շուրջը ուռեր տնկեց
և ուռերով կողով գործեց:
Ուստէն դուրսը, արջը միջին՝
գործքը հասաւ արջի դնչին:
Կողովը դեռ կիսատ-պռատ,
հովիւ ու շուն երեք-չորս հատ
վրա տւին ուռէ բերդին
վեր գցեցին արջին գետին...



Կոպալտեցին,
բըզկրտեցին,
կողովն առան
հալածեցին
արջին իրան...

Արջը յուզւած,
սաստիկ գզւած,
լնգին-լնգին,
կոպալ դուռնջը
ծնկին-ծնկին,
փախաւ զնաց
սարը հասաւ.
սարիցն ասաւ.

—Աղւէս, Աղւէս...
գետինն անցնես, քո ցեղովը,
գլխիդ կպչի քո կողովը,
բուրդս գգեց շան ժողովը...

Ա. ռ. ա. ծ. — Արջն իր ահից կը գողայ:



Կանեւը



—Ո՞հ, հա հօ, փոփոալով սայլը
եկաւ, սերնը բերեց Կանեւը:
Գիւղացին գոգնուցը կապեց,
սերնը մէզն ածեց ու սկսեց
Կանեւ: Կանեւ պրծաւ, թեյ Կափանն ու
Կափանեւ:

150. Ասելուկ

—Կիկլիկի՜... մշեցի,
մի շուխտ կորեկ թխեցի,
ծամոն առայ ծամեցի,

կտեր ծէրին նստեցի,
ալ-աբրեշում մինթանէս
բրդէ թելով կարեցի:

Դուռնչը

Արևը փափայրեց, անշրևը գրեց գերիներ։
Աերնը ծիլ փռեց, ծիլը բարձրացաւ յօրուն
արշակեց ու հասկ բռնեց։ Դասկը հասաւ
ու լցեց հասրիկներով։
Վրէց մեղմ խամին, ծա-
ծանեց արարը մեծ ծո-
վի նման։ Գիւղացին եկաւ մանգաղը յե-
ռին և ուրախ-ուրախ հնչեց ու բարդեց։



152. Խլեզի նախաճաշը

Խլեզը մի ծանօթ ձայն լսեց, պոչը շարժեց և ուրախացաւ։ Վազեց
թագնեց մի փունջ խոտի ետև, աչքերը չռեց և ականջները սրեց։

— Տը՛ղզ-տը՛ղզ... երգում էր մի կապույտ ճանճ ու թռչում խլեզի
շուրջը։ Խլեզը լսատու էր շրթունքները ու մտքումն ասում։ — Ա՛յ
թէ կը բռնեմ...

— Տը՛ղզ-տը՛ղզ... Ճանճը թռաւ նստեց մի բարի վրա։

Խլեզը բարկացաւ, ուզեց հետևել ճանճին, բայց անհանգիստ
ճանճը նորից ետ եկաւ և նստեց խլեզի մօտ։ Այդ փոքրիկ անխելքը
չը նկատեց, որ իրեն հետևում են երկու սև աչքեր։

Խլեզը բարձրացրեց ըթիկը, բերանը բաց արաւ, ու՛ հափ... բըռ-
նեց ճանճին։

Բռնեց, աչքերը ճրպճրպացրեց և ուրախութիւնից պոչը շարժեց։
Ինչ համեղ էր խլեզի նախաճաշը։

Ա. ռ ա ծ. — Կատին՝ խաղ է, մկանը մահը է։

153. Սիրուն գիշեր

Սիրուն գիշեր...

լուսնի շողեր

պար են բռնել

ջրի հետ.

գետն է հոսում,

օրօր ասում,

փսփսում է

լուսնի հետ։



Մեղմիկ քամին

փարուում ջրին,

խաղ է անում

գետի հետ՝

Արծաթ ջրեր,

լուսնի սուեր

համբուրում են

իրար հետ։

Հանելուկ. — Էն ի՞նչն է. — Ցերեկը լցում է, գիշերը՝ դատարկում։

154. Փայլի ձագերը

Մի անգամ մայր-գայլը ձագերի հետ գնում էր դաշտով և շա-
րունակ բարկանում էր ձագերի վրայ։ Ձագերն ասում էին. —

— Դու մեզ չես սիրում, դու մեզ չարչարում ես, դու մեզ
կուտես։

Մայրը ձայն չէր հանում։ Մէկ էլ յանկարծ լսեց որսորդի շան
հաշոցը։

— Մո՛ւս կացէք ասաւ գայլը, շուտով պառկեցէք գետնին և գլուխ-
ներդ թաղեցէք խոտերի մէջ։ Ձագերն իսկոյն պառկեցին։ Մայրը
սկսեց վազել ինչքան ոյժ ունէր։ Շները որ նկատեցին՝ ընկան գայլի
ետևից։

— Ա՛յ թէ ինչպիսի մայր ունենք, խօսեցին ձագերը պառկած
տեղերից, — մեր մայրը իր գլուխն ազատեց, իսկ մեզ թողեց շների
ճանկերում։

Անցաւ երկար ժամանակ։

Մուլթն էր, մայր-գայլը վերադարձաւ ձագերի մօտ։ Խեղճ կեն-
դանու ոտի մինը վիրաւորւած և վիզը արիւնթաթախ էր...

— Դէ՛հ, սիրելիք, գնանք տուն, — ասաւ նա ձագերին։ — Երբ դուք
էլ կը մեծանաք և ձագեր կուենաք, ահա այսպէս հեռացրէք նրան-
ցից շներին ու որսորդներին և ազատեցէք փորձանքից։

Ձագերը նոր հասկացան՝ թէ ինչպէս է սիրում և խնամք տա-
նում իրենց վրա իրենց մայրը։

Գայլն ինչպիսի կենդանի է։

Կար կասե՞ր

Նու՛նը վերգայաւ. կարոյն ընկաւ: Գիւղա-
յին կարը պարտաւորեց, հնչածը քունը կրեց,
փռեց կարի մէջ, կամերը
լծեց ու կասեց: Կասածը
թեղ արաւ փամեց, ցորենը
հանեց, հաւաքեց ու աւաւ:



— Իմո՛ւ մայր հողին՝ մեր մեղքին,
հայ է քաջիս աշխատողին...




156. Փշուխ տրաքեց

Գիժ տղի բանաստեղծութիւնը լսեցէք. — Այբ, բեն, — գողին գմբեմ:
Գիմ, Դա, — ճիպոտը հազիր ա: Եչ, զա, — կաց ու հազան:
Է, Եթ, — խաղս մնաց ետ: Թո, Ժէ, — մի բան չաժէ:
Խնի, Լիւն, — իծանս եկան տուն: Խէ, Ծա, — կարգացողը մեծ ա:
Կեն, Հո, — գերի չեմ հօ... Չա, Դատ, — մնացի սախատ:
Ճէ, Մէն, — ամէն... Յի, Նու, Ծա, Ո, Չա, Պէ, Ձէ, Ռա, — Սոճած մեռայ:
Սե, Վե, Տիւն, Բէ, — էս ինչ ծանր է...
Տո, Հիւն, Փիւր, Քէ, — իշի բուրբ է:
Օ, Ֆէ, — ովվէ՛հ, գլուխս տրաքեց...

Ա. ռ. ծ. — «Ով կարգայ, նա մարդ ա»:

Սողունը

Կորենը մաղային, փռեցին ու չորացրին:



Չոր սողունն ածեցին
զւարներն ու քարան զա-
ղայ: Չաղայականը ալիւր
աղայ: Գիւղացին ալիւրը
քունը բերեց, լցրեց ածխին ու հանգստացաւ:
Չմրան պաշարն արդէն պարտաւոր էր:

158. Ընկերը...

(Հ է Բ Ի ա ք)

Օձն ու Աղւէսը ընկերացան:

Մի օր նրանք գետից պէտք է անցնէին:

— Ախպէր ջան, ասաւ Օձը, գլխովդ պտոյտ գամ, ես ջրից
վախում եմ. թող վզովդ փաթաթւեմ, ինձ գետից անցկացրու:

— Շատ լաւ, բուրիկ ջան, պատասխանեց Աղւէսը, էլ որ
օրւայ համար եմ, որ անուշ բուրիկիս չօգնեմ: Արի փաթաթուի:

Օձն օղակ-օղակ փաթաթւեց Աղւէսի վզովը և երկուսով մտան
գետը: Գետումը օձը սկսեց սեղմել Աղւէսի բուկը:

— Ի՞նչ ես անում, անուշ բուրիկ, ասաւ Աղւէսը, ի՞նչ ես
անում. չէ՞ որ խեղդեցիր... — Իմ ուզածն էլ հէնց էդ է...

— Անուշ բուրիկ, շատ սիրելուցդ է, որ էդպէս ես անում, ես
էլ ես օրւան էի սպասում, որ բուրիկիս զրկումը հոգիս տամ: Քու-
րիկ ջան, մեկնի քո էդ ճկուն, ատլաս վզիկը, մի վերջին անգամ
նայեմ քո վառվռուն, թաւիշ-թովիշ աչքերիդ, կարօտս առնեմ ու
նոր մեռնեմ... Օձը մեկնեց վիզը:

Աղւէսը հափ, բռնեց բկից ու պինդ սեղմեց: Սեղմեց ու խեղդեց,
խեղդեց դուրս բերեց ափը, մեկնեց օձին և ասաւ. — Ա՛յ, էսպէս ու-
ղիդ պէտքէ լինի ընկերը...



Թաժայ հայ

Հարս ու սկեսուր
այիւրը մաղէցին ու
խմոր հունցեցին: Գնացին թոնիրը վառե-
ցին եկան խմորը գնդեցին ու քարան
թոնրապուն: Գնդերը բաց արին ու քափ
թոնրի կողք քսին: Բարչրայսա թաժայ
հայի հոյրը: Դայը թխեց, քաշտը լցեց:

160. Կոռնկն ու աղետը

(Հ է Բ Ի ա Թ)

ա.

Աղւէսն ու Կոռնկը ընկերացան: Կոռնկը բուն շինեց, ձու ածեց,
թուխս նստեց, ձագ հանեց: Աղւէսն էլ ձագեր ունեցաւ, մայր
դարձաւ:

Մի օր Կոռնկը դուրս գնաց ձագերի համար կերակուր բերելու
սնապահ Աղւէսը բռնեց Կոռնկի ձագերից մէկին, կոլորեց, վիզը ոլո-
րեց, անուշ արաւ: Տուն եկաւ Կոռնկը և ի՞նչ տեսնի... Աղւէսը լա-
լիս է, իրան քրքրում ու ասում:—

— Կոռնկ քուրիկ, էսպէս էլ անբախտութիւն...

— Ի՞նչ անբախտութիւն, ի՞նչ է պատահել, Աղւէս քուրիկ:

— Բա չես ասի, մեր բալիկը չը կայ ու չը կայ: Է՛նքան ման եկայ,
է՛նքան ման եկայ, չը կայ ու չը կայ:

— Ո՞ր բալիկը:

— Մեր բալիկը,

— Ախր ո՞ր բալիկը:

— Նա, նա,
աչքս կուրանայ.
փափկամազիկ,
երկար-վզիկ,

երկար-ոտիկ,
երկար-տոտիկ,
բոյը բարձրիկ,
ձէնը քաղցրիկ բալիկը...

Գովում էր Աղւէսը, իրան քրքրում, մին խփում, հազար թափում:
— Աղւէս քուրիկ, — ասում է Կոռնկը. —

Դու ձագի տէր ես,
դու սիրող մէր ես,
արցունք մի թափի,,

արցունք մի չափի:
Դա էլ չար բախտից,
դա էլ իմ բախտից:

— Հա, հա, հեկեկում էր Աղւէսը, հա, Կոռնկ քուրիկ, հա, լացը
չի օգնի, անցածն անցած է:

բ.

Երկրորդ օրը Կոռնկն էլի գնում է կերակուր բերելու: Տնապահ
Աղւէսը հիմի բռնում է Կոռնկի միւս ձագին, կոլորում, վիզը ոլո-
րում ու անուշ անում, տեղը բան չի թողնում: Տուն է գալիս
Կոռնկը և ի՞նչ է տեսնում... Աղւէսը երեկանից աւելի դառը լալիս
է, մին խփում, հազար թափում, իրան քրքրում ու լալով ասում...

— Ախ, Կոռնկ քուրիկ,
քուրիկ ու մէրիկ,
իմ աչքը դուրս գայ,
աշխարհը փուլ գայ.
փափկամազիկ,

երկար-վզիկ,
երկար-ոտիկ,
երկար-տոտիկ,
բոյը բարձրիկ,
ձէնը քաղցրիկ,

էն մի բալիկն էլ չը կայ...

Կոռնկն էս անգամ հասկանում է, որ ձագերին ուտողը քուրիկ
Աղւէսն է, բայց իրան չը հասկացողի տեղ է դնում ու ասում:

— Աղւէս քուրիկ,
քուրիկ, մէրիկ,
դու ձագի տէր ես,
դու սիրող մէր ես,

արցունք մի թափի,
կաթդ կը ցամբի,
դա էլ չար բախտից,
դա էլ իմ բախտից...

— Դու ճիշտ ես ասում, ա՛յ Կոռնկ քուրիկ, չար բախտի ձեռից
ո՞ւմ գնանք զանգատ, — հեկեկում էր Աղւէսը ու քթի տակ ծիծաղում
Կոռնկի վրա:

—Աղւէս քուրիկ, մի օր էլ ասում է կռուները, էն է իմ ձագերը
կորան, տանողի աչքը դուրս գալ, քո ձագերն էլ մեծացան, իրենց-
իրենց կապրեն։ Արի գնանք բիշ ման գանք սրտներս բացւի։

—Է, ուր գնանք, կռուներ քուրիկ։

—Այ, հէնց կուգես երկինք թռչենք, տեսնենք վերին ի՞նչ կայ։

—Ի՞նչ ես ասում, քուրիկ, ծիծաղեց Աղւէսը, ինչպէս կարող եմ
քեզ հետ թռչել, ես թե չունեմ։

—Է, ի՞նչ անենք, որ չունես, ես հօ ունեմ։ Նստիր ինձ վրա,
միասին թռչենք։

Աղւէսը ինքն իրան մտածում է. «Էս ի՞նչ լաւ եղաւ. կը գնամ
երկինք, պատահած թռչունը կը խեղդեմ, վեր կածեմ գետին. ետ
գալիս էլ քուրիկիս կը բռնեմ կուտեմ... Սրանից էլ լաւ բան։

Աղւէսը նստում է կռուների վրա։ Կռուները թափահարում է
թեւերը, վեր բարձրանում, գնում է ու գնում, հասնում է երկինք ու
յանկարծ շուռ է գալիս։ Մէկ էլ աղւէսը մէջքի վրա դրը՝ խկ... ընկ-
նում է գետին ու իրեն ջարդում։

—Աղւէս քուրիկ, ցած գալով ասում է կռուները, էդ էլ քո բախ-
տից, էլ քո բախտից։



161. Էլի քաշացի...

Գիւղացիները գեղամիջում գէսից-դէնից խօսում էին։

—Տղերք, կը հաւատամք, որ ասեմ՝ կեանքիս մէջ վաթսուն գէլ
եմ սպանել։

—Ի՞նչ ես ասում, Վարթեան քեռի, մարդ կարող է էդքան գէլ
սպանել։

—Ձէ, ասենք վաթսուն չի լինի, համա յիսունը կը լինի, պա-
տասխանեց Վարթեանը։

—Վարթեան քեռի, արի քիչ էլ քաշացի, մէջ մտաւ մի գիւղացի։

—Այ տղայ, ինչի՞ ես էդպէս ասում, յիսուն որ չը լինի, քառա-
սուն հօ կը լինի։

—Վարթեան քեռի ջանքով ինձ բախշի, ասաւ մի ուրիշը։



—Ախպէր, թէ որ ասում ես քառասունը չի լինի, շատ լաւ, երե-
սունը հօ կը լինի։

—Երեսունն էլ չի լինի, էլի քաշացի, ասաւ սանահէր Պողոսը։

—Քաւոր Պողոս ջան, դու էլ էդպէս... երեսունը չը լինի, թող
քսանը լինի։

—Ո՞ր տեղից կը լինի, էլի քաշացի։

—Ախպէր, դրուստն ասեմ, հալալ տասնուհինգ գէլ եմ սպանել։

—Ինչէ՞ր ես ասում, Վարթեան քեռի, էլի քաշացի, — ձայն տւին
գիւղացիները։

—Լաւ, հօ տասը գէլ սպանած կը լինեմ, էլ ի՞նչ էք ուզում։

—Ձէ ախպէր, էլի չեմ հաւատում... Դու տասը գէլ սպանած
չես լինի։ Արի էլի քաշացի ասաւ Արսէն բիձէն։

—Տէր Աստուած... էսպէս էլ կրակ, ինքը հօ սպանած կը լինեմ...

—Ինչ էլ սպանած չես լինի Վարթեան քեռի, էլի քաշացի։

—Ախպէր, ինչի՞ սուտ ասեմ, ութ գէլ եմ սպանել։

—Էլի քաշացի... Դու որ ութը գէլ սպանած լինես, ես փա-
փախս ութ անգամ գետնովը կը խփեմ, ասաւ Աղալօն։

—Աղալօ բիձա, դու էլ ես էս ջահելների պէս խօսում, ով գիտի
ասես օխտը գէլ էլ չես սպանել։

—Բաս սպանել եմ, ինչի՞ ճիշտը չես ասում, էլի քաշացի։

—Լաւ, լաւ, ախպէր, որ ասեմ՝ վեց գէլ եմ սպանել, հօ ձեր
ձեռքից կաղատեմ...

—Ձէ, Վարթեան քեռի, էդ էլ չեղաւ, արի քիչ էլ քաշացի...

—Ո՞ր անիծածը էլ կը քաշանայ, որ սպանէք՝ էլ քաշացողը
չեմ, ասաւ Վարթեան քեռին ու փափախն առաւ փախաւ։

Ի՞նչսիսի մարդ էր Վարթեան քեռին։

Ա. Բ. Ժ. — Սուտ ասողի տունը կրակ ընկաւ՝ ոչ ոք չը հաւատաց։

162. Տարին քոյոր

Ամառն արաւ, Աստուածածին, տուն մտի.

Աշնանն արաւ, Սուրբ խաչը, սնդուկ մտի.

Զմեռն արաւ, Նոր-տարին, քեզ բարի կաղանդ.

Գարնանն արաւ, Զատիկդ՝ առ կեանք ու եռանդ։





I. Շ Ր Չ Ա Պ Ա Տ

(Տուն, քահ, դպրոց, իրազնական պատկեր)

ԵՐԵՍ	ԵՐԵՍ
1. *Մեր դպրոցը (ոտ.) 3	10. *Կատու 7
2. *Դէպի դպրոց »	11. *Արի, սև էծիկ (ոտ.) »
3. *Խնձոր (ոտ.) 4	12. *Էն հիկ էր (ոտ.) 8
4. Հովանոցի տակ Կայծակ »	13. *Հարա աքորը »
5. *Ոսկին ու թուրը. (ժողովրդական) »	14. *Տիկնի պակը (ոտ.) 10
6. Իրազնական պատկեր 5	16. Բրուտը. ըստ. Սըրնգի 11
7. Սառայի խաղը (ոտ.) Բաֆֆի 6	17. Ժամացոյցի սլաքները «Աղբիւրից» 12
8. Նունիկի համբոյրը. «Հասկեր» »	18. Աշուղ ծիտը (ոտ.) Աբգ. Պայեա- ղատ »
9. *Ախպօրս (ժող.) »	

II. Ա Շ Ո Ի Ն

(Տերեւածափ, թռչունների չուն, ցուրտ, իրազնական պատկեր)

19. *Առաջին աշուն 13	30. *Զին ու եղը (ոտ.) ժողովրդ 19
21. *Տերեւածափ 14	31. *Աղւէսը (ոտ.) 20
22. *Անտերև ծառը (ոտ.) »	32. *Նամակ ծառերից 21
23. *Աշուն (ոտ.) »	34. *Թոփլանը 22
24. Իրազնական պատկեր 15	35. *Գայլը (առակ) »
25. Հաց ու պանիր Նար-Դոս-ի 16	36. Խորամանկ աղւէսը Պ Պոռեան 23
26. *Էն ժամանակն էր (ժողով-ից) »	37. *Գառը (առակ) »
28. *Ծիծեռնակների ժողովը 18	38. *Սարդը (ոտ.) 24
29. *Թռչուններ »	39. *Բամի »

III. Չ Մ Ե Ռ

(Զին, պաշտպանութիւն ցրտից, հէքիաթ, իրազնական պատկեր)

40. *Առաջին ձմեռ 25	50. *Իւշու են հալածում մեղ 31
42. *Ձմեռ (ոտ.) 26	51. *Զին (ոտ.) ժողովրդականից 33
43. *Ձմրան ցրտին »	52. *Սերորը 32
44. *Յուրա է (ոտ.) 27	53. *Պուտուկը (ժողովրդական) »
45. *Սուրիկի մտածումը »	55. *Չախախը (ոտ.) 33
46. Իրազնական պատկեր 28	56. *Ճոխը (հէքիաթ) 34
48. *Իսկի (ժողովրդական) 29	57. *Գիշեր (ոտ.) 38
49. *Բոթոթը (ոտ.) 30	

Ծանօթ.— Աստղանիշ յօդածներն ու ոտանաւորները խմբագրել, փոխագրել և կամ գրել են գիրք կազմողները:

VI. Գ Ա Ր Ո Ի Ն

(Գարնան նշաններ, վար ու ցանքս, խոտհունձ, իրազնական պատկերներ)

ԵՐԵՍ	ԵՐԵՍ
58. *Առաջին գարուն 39	84. *Խխունջն ու սունկը 53
60. Մուկիկի մահը (ոտ.) Յովհ. Թում. 40	85. Իրազնական պատկեր 54
61. Իրազնական պատկեր 41	87. *Դաշտի ծաղիկը 55
62. *Գարուն (ոտ.) 42	88. *Արևն ու ծիածանը 56
63. *Երեխաների վէճը »	89. *Ծիածան (ոտ.) »
64. *Ախպէր ջան (ժողովրդական) »	90. *Թուխը 57
66. Էն հիկ է (ոտ.) Ընծայեցի »	92. Խելօք տատը (ոտ.) Զաւախեցի 58
67. *Արաղիկներ 44	93. Նանի աղօթքը (ոտ.) Զաւախեցի 60
68. Մանուշակ (ոտ.) »	94. *Աստու ըալիկը »
69. Արեգակին (ոտ.) Յ. Յովհան. 45	96. *Ուղտաբեկա (ոտ.) ժողովրդ. 61
70. *Արևը »	97. *Ծիածան ու որբերը (հէքիաթ) 82
71. *Լուսին ու աստղեր 46	99. *Մարդը 66
73. *Արտուտի երգը 48	100. *Եղը ջան (ոտ.) »
74. Մեր թիւերները. Շիրվանզադէ »	101. *Ծով դառել (ոտ.) ժողովրդակ. »
75. *Բամի (ոտ.) »	102. *Ուրախ եմ 67
76. Զէյրանի սիրուն Սիմակ 49	103. *Սոխակը վանդակում (ոտ.) »
77. *Բիկիկ-ձկնիկը (ոտ.) »	105. *Չատիկը 68
79. *Այգի (ոտ.) »	106. *Անուշ լեզուն (ժողովրդ.) »
80. *Շողիկի երգը 51	107. *Ծիծեռնակին (ոտ.) 69
81. *Օրհնւի քո սարը 52	108. *Սոխակը »
82. *Օրհնւի (ոտ.) ժողովրդականից »	109. Ծաղիկների երգը (ոտ.) Յովհ. Թում. 70
83. *Խոտհունձ (ոտ.) 53	110. Դաշտի վարդը (ոտ.) Յովհ. Յովհ. 71
	112. Մկան ճառը (ոտ.) 72

V. Ա Մ Ա Ռ

(Ջերմութիւն, արտ ու արօտ, դաշտային աշխատանք, իրազնական պատկ.)

113. *Առաջին ամառ 73	131. *Ընկուզենու ծնունդը 84
114. *Ամառ (ոտ.) Մ. Մամիկոնեան »	132. *Պարծենկոտ էժը (ոտ.) 85
115. Յօդ. Լ. Տօլստոյ 74	134. *Բաղաքացի Վաչիկը 87
116. *Մայրը »	135. *Անձրև (ոտ.) 88
117. Իրազնական պատկեր 75	137. Իւշ անուշ... (ոտ.) Դ. Դէմիրճեան 89
119. Սագերը (ոտ.) »	138. Հակայ մըջիւնը. II մասը Տ. Գիւ- զալեանի 90
120. *Արտերը (ոտ.) 77	139. *Դարբին (ոտ.) 91
121. *Անտառում 78	140. *Կաղնին ու կոցահարը 92
122. *Թռու... (ոտ.) 79	142. *Ուրազ-ուրագի (խաղերգ) »
123. *Ամենից լաւը »	143. *Աշխատասէր բանուորը 94
125. *Օձն ու արագիլը 81	144. Իրազնական պատկեր 95
126. *Ճանճի մահը (ոտ.) »	145. *Ո՞վ էր մեղաւոր (հէքիաթ) 96
127. *Ռէս Օհանին (ժողովրդ.) 82	147. *Կոնաբոնուկի (խաղերգ) 97
128. Արմիկն ու կոլոտն («Հասկերից») »	148. *Կողովագործ աղւէսը (հէքիաթ) 98
130. Ալագեազը (ոտ.) Ա. Իսահակ. »	

150. *Ասեղուն (ժողովրդական)	101
152. *Խլեզի նախաճաշը	102
153. Սիրուն գիշեր (ոտ.) և Հայրապետեանի	103
154. Գայլի ձագերը. թարգ. Մ. Ս. »	

156. Գլուխ տարաւ, Խ. Արովեանի	104
158. *Ընկեր (հէքիաթ)	105
160. *Կռունկն ու աղւէսը (հէքիաթ)	106
161. *Էլի քաշացի	109
162. *Տարին բոլոր (ժողովրդականից)	»

VI. ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՁԵՌՆԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ

15. *Առաւօտ. (գլխատառեր՝ վերջակէտից յետոյ և յօղաձի սկզբին)	9
20. *Չը գտան. (Յատուկ անուն մարդկանց գլխատառ.	13
27. Ինչ տեսայ (Յատուկ անուն աշխարհագրական.—գլխատառ)	17
33. *Չէյրանի ձագը (տողադարձվանկեր.)	21
41. *Կաշաղակ (կէտադրութեան բոլոր նշանները)	25
47. Աղբատ կինը (ու. իւ.)	29
54. Սիրելի Մանեակ (երկբառառներ՝ ետ. եօ ..)	33
59. *Իրիկուն. (երկբառառներ՝ այ, ոյ.)	39
65. Քամի (միավանկանի, յոգնակի)	43
72. Աշխարհում (բազմավանկանիներ յոգնակին)	47
78. *Ընկոյզը («ը» ձայնաւորը բառի սկիզբն ու վերջը)	50
86. *Զբօսանքին («ը» բառամիջում սկ. ստ. սպ. զբ. ..)	53
91. *Վարդան ապին («վ» բառի սկզբին, մէջը և վերջը)	58
95. *Ազաւեր խրատը («ւ» ա-ից, ե-ից և ի-ից յետոյ)	61
98. Անգրագէտ («է»-ն բառի սկզբին, մէջը և վերջը) Յ. Յովհաննիսեան	65

104. Իմ որդին («ո»-ն բառի սկիզբը, մէջը և վերջը)	68
111 Հասօի եղները «օ»-ի գործածութիւնը) Բաֆֆի	72
118 *Պատասխանը («յ»-ն բառի ըսկիզբը, մէջը և վերջը)	76
124. *Փչիւր հովիկ («հ» տառի գործածութիւնը)	80
129. *Ուռնի («ու» տառի գործածութիւնը)	82
133 *Աքլորն ու մարգարիտը (ոտ.) (կրկնութիւն՝ օ. ո.)	86
136. *Խորամանկ ծիտը (կրկնութիւն՝ ո, ր ..)	89
141. Պապի օրհնութիւնը (վարժութիւն՝ ե, է...) Սիմակի	93
146. *Վար անելը (կրկնութիւն՝ իւ, ու...)	97
149. *Ցանկը (կրկնութիւններ վ, լ.)	101
151. *Հունձ (գրաւոր վարժութիւն, գլխատառեր)	102
155. *Կալ կասելը (կրկնութիւն հ. ի շուրջը)	104
157. *Աղունը (գրաւոր վարժութիւն)	105
159. *Թաժայ հաց (կրկնութիւն յ-ն բառի վերջը)	106

VII. ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1. Գրիչ	3
2. Կրակի ծուխն ու մոխիրը	4
3. Ետքի թաթը	6
4. Տրեխ	17
5. Այծենու տիկը	19
6. Տարին 12 ամսով և ամիսը 30 օրով	23
7. Քամի	24
8. Թուր և պատեան	32
9. Լ-ինը՝ լուսին	47
10. Ուրդը տառեր	47

11. Կաշաղակ	53
12. Ծիածան	56
13. Արև ու լուսին	60
14. Ականջը	61
15. Խօսք	67
16. Եղջերուի եղջիւրները	77
17. Ասեղ ու թել	88
18. Ածելի	92
19. Ծրագ	94
20. Ծալք՝ անկողնի	103

Պատրաստ է տպագրութեան «ՄԵՐ ԴՊՐՈՅԻ» երրորդ տարին

(Գրքի ամբողջ նիւթը նորութիւն, բազմաթիւ նկարներով, ուղղագրական ձեռագիր օրինակներով և զիտողական պատկերներով):

Մի խումբ ուսուցիչների կազմած դասագրքերից

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

I

- 1) ՄԵՐ ԴՊՐՈՅԸ, Հայոց լեզուի Բ. տարւայ նոր դասագիրք, պատկերազարդ ընթերցարան, ուղղագրական ձեռագիր օրինակներով և իրազնական պատկերներով 40 կ.
- 2) Դասագիրք Հայրենագիտութեան, Գ. տարի, ծննդավայր, մերձաւոր բնագաւառ և Կովկաս 30 կ.
(Պահեստը՝ «ԳԻՐ» գրալաճառանոցում.)

II

- 1) ՄԵՐ ԴՊՐՈՅԸ, Հայոց լեզուի Ա. տարւայ նոր դասագիրք, երկրորդ բարեփոխ. տպագրութեամբ, արտագրութեան ձեռագիր օրինակներով 25 կ.
(Պահեստը՝ «ՆՈՐ ԿԵԱՆՔ» գրալաճառանոցում.)

ԳԻՆՆ Է 40 Կ.

ՀԵՏՁՀԵՏԷ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍԵՆ

- 1) Հայրենագիտութիւն՝ «Գ.» տարւայ պատմական մասը.
- 2) ԳԵՂԱԳԻՐ. ուղղագրութեան ձեռագիր պատկերազարդ օրինակներ, երկու մասով.
- 3) Հայրենագիտութեան դասագիրք «Գ.» տարի:

① 17770 un

«Ազգային գրադարան



NL0240321

9067

ApM.

14-8382